

2740

Земельный
кадастр
№ 2740

9(47)

Ж-31

1923

24 JAN 2008

14 MAY 2011

ՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՑԵՐԿՆԵՐԻ, ՄԻՈՑԵՐ

ՑԱԿԵՆ ԴՐԱԴՈՐԵՆ № 20

Ա. ՇԱԳՈՎԱՆՈՎ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐԻ

ՈՒՂԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ռ. Կ. ՅԵ. Միսրյան Անդրեասի
Յեղրային Կոմիտեի.

92
Շ-31

ԹԻՖԼԻՍ-1923.

2740

9(47)
3-31

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐԵՆԵՐ ՄԵԱՅՆԷ:

№ 20

ԿՕՄԻՏԵՍԵՎԱՆ ԿՐԻԿՐԱՆ

№ 20

Յ Ա Ն Կ

	Երես
1. Մանկութիւն	3
2. Երկաթուղու արհեստանոց մտնելը	17
3. Մեծ դարբնոց անցնելը	33
4. Կրօնական վերապրումներ	39
5. Յերեկոյան դպրոց բանվորների համար	64
6. Կրօնի հետ խզումը	79
7. Սոցիալիստների վորոնումը	86
8. «Народная Воля» կուսակցութեան մեջ մտնելը	101

Ա. ՅԱՊՈՎԱՆՈՎ

4

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐԻ ՈՒՂԻՆ

33579

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ռ. Կ. ՅԵ. Միւսթյան Ս.Նգրկովիտսի
Յեկրային Կոմիտէի.

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐԻ ՈՒՂԻՆ

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մենք բնակվում եյինք վագոնների արհեստանոցների բակում, ուր հայրս կատարում էր գիշերային պահապանի պաշտոնը:

Իմ առաջին հիշողությունները կապված են գործարանի հետ: Թախծալից զուգուհը, վոր հայտարարում էր աշխատանքի սկիզբն ու վերջը, մուրճերի հարվածները մետաղներին, մեքենաների աղմուկն ու գրրոյունը, բանվորների ահազին մասսանները, վորոնք ծփում եյին դեպի գործարան և նորից թափվում դուրս և հեղեղում փողոցները — այդ բոլորը ճակատագրական էր ինձ համար:

Այդ մթնոլորտումն եյին սնցնում իմ տարիները, թողնելով իմ հոգում իրենց դրոշմը:

Աշխատավոր կյանքից բացի այլ կյանքի յես ծանոթ չեյի: Սկսած ութը տարեկան հասակից, գարնան սկզբից մինչև ուշ աշուն ես կովեր եյի արածեցնում գործարանի ամայի բակում: Իմ

բանվորական որը տեղում էր առավորովա ժամը շորսից մինչև երեկոյան ժամը 10—11-ը: Կովերի աշխատանքը ձմեռն ավելի ծանր էր. պետք էր դուլլերով ջուր կրել, կերակրել կովերին, բահով մաքրել գոմի թրիքն ու կաթը ցրել քաղաքում:

Այդ ժամանակ ծնողներս տեղափոխվեցին Ուլոդնայա ջրանցքի դետավնյա փողոցից, վոր գտնվում էր Վարչավա և Բարտիկ կայարանների միջև (մենք առաջ ապրում էինք, Վարչավյան յերկաթուղու արհեստանոցների ահագին տարածութեան հակառակ ծայրը վոր «Ֆլիգելներ» էյին կոչվում): Դրանք երկհարկանի յերեք երկար շինություններ էյին, ուր բնակվում էյին երկաթուղու ծառայողները: Այդ շինությունները կառուցված էյին քաղաքի ամենահեռավոր մասում, վորոնց մի կողմը գտնվում էյին երկաթուղու արհեստանոցները, մյուս կողմից—Մխարոֆոնյան գերեզմանոցը: Չախից տարածում էյին վառելափայտի ահագին պահեստները, աջ կողմում գտնվում էր նեխված լեճը և աղբակոյտը իր գարշ հոտով: Այստեղ բուն քաղաքը կորչում էր ծավալվող տարածութեան մեջ, սկսվում էյին ազարակները և ահագին «Յեռացած Դաշտը»:

Ճիզիքական հոգնածություն գգացմունքի հետ էս ծանոթացա ութ տարեկան հասակից: Կա-

թով լի կժերով բեռնավորված, ավելի քան հինգ վերստ տարածություն կտրելով, էս ամեն որբրտնքի մեջ լողում, ուժասպառ էյի լինում տանջանքից: Ծանր կժերը կտրում էյին ձեռքերս, աղբակույտից տարածվում էր անտանելի գարշահոտություն: Դպրոց գալով էս արդեն բուլրովին հոգնած էյի լինում:

Հայրս, վորի համար ծանր էր 15 բուլրով մեծ բնտանիքը պահել, երկու կով էր պահում: Վորովհետև մեր մութ ու կեղտոտ գոմում ոգ և լույս սոված բաները չկային, այդ պատճառով էլ մեր կովերը հաճախ հիվանդանում էյին ու սատակում: Նա և մայրս այդ անբախտությունը մեր նախանձ հարեանների «չար աչքին» էյին վերագրում:

Նոր գնված կովերը էս պահվելով կեղտոտ ու մութ գոմում, վարակվում էյին ու սատակում: Այդ կովերը մեզ այնքան էլ չէյին ոգնում: Չը նայած շատ ծանր աշխատանքին, մենք կերակրվում էյինք միայն սև հացով ու կարտոֆիլով:— «Մարդու փորը հայելի չէ,—ասում էր հայրս,— ուզում էս խոտով լցրու միկնույնն է»:

Դպրոց էս բերում էյի սև, ավազախառն հաց, վորն ատամներին տակ ճրթճթում էր: Շուտով հասկացա նախանձ կոչված գգացմունքը, վորը զարթնեց իմ հոգում նրանից, վոր էս տեսնում

եյի թե ի՞նչպես մյուս, ավելի բախտավոր երեխաները, որինսակ իր հարևան «Փրիզկան» ուսում եր սպիտակ բուլկին, կաբագով հացը, քաղցրեղենը, և այլն:

— Հյուրասիրիր, — ասում եր վորեւ աղքատ աղա մյուսին, մի ավելի հարուստ աշակերտի, վոր սպիտակ բուլկի եր ուտում:

— Առ, կռձի, — շատ անգամ ծաղրալից պատասխանում եր այս վերջինս, ցույց տալով իր բուռնցքը: Հենց վոր ես կարգալ սովորեցի, իմ մեջ առաջ եկաւ սեր գեպի ընթերցանությունը: Շատ անգամ ես ամբողջ գիշերներ եյի լուսացնում կարգալով, և մորս քիչ հոգսեր չեյի պատճառում, այս կամ այն հարևանի մոտ գրքերի ուղարկելով:

— Մայրիկ, գնա, ինձ կարգալու մի գիրք խնդրիր, սովորաբար ձանձրանում եյի նրան: — Հանգստություն չունեմ քո ձեռքից, անպիտան. — գոռում եր մայրս, — յերեկ չեք, վոր քեզ համար գիրք ճարեցի:

— Բայց ես արդեն կարգացել եմ, այդ գիրքը, պատասխանում եյի յես: Վորովհետև զրադարան այն ժամանակ չըկար, իսկ գիրք գնելու ել վող չունեյինք, ես կաշում եյի մորս յախից, մինչև, վոր նա գնում եր մեքենավարներից մեկն ու մեկի մոտ գիրք խնդրելու:

Ընթերցանությունը, ի հարկե, վերին աստիճանի վայրի վերո եր, անսխառն: Յես կարգում եյի ամեն բան, ինչ վոր ձեռքս եր ընկնում: «Եժանագին Գրականություն», ինչպես Բովու — Կորուկիչի, Յերուսլան Լաղարյեվիչի մասին զրված առակները, սրբերի կենցաղը, թարգմանական ըմաններ, ճանապարհորդական վեպեր և այլն: Յես շատ հավանեցի ճանապարհորդական նկարագրությունները, ասպետական վեպերը մանավանդ Գոգոլի «Տարաս Բուլբա» վեպիկը:

Ընթերցանությունը զարգացնում եր իմ հոգում երագելու արամադրություն: Յերբ առավոտները, բեռնավորված կաթով լի կժերով, ես քաղաք եյի գնում, կարգացածս գրքի բնույթի համեմատ, ինձ թվում եր, վոր ես կամ արդարների պաշտպան ասպետ պեաք ե զառնամ, և կամ ճանապարհորդ, վորին վիճակվում ե բազմատեսակ արկածների հանդիպել: Այնուհետև ինձ թվում եր, վոր ես պեաք ե մի նահատակ զառնամ, վորը խաչվում ե «հանուն քրիստոնեական» իդյախների, կամ մի հեքիաթական հերոս, վոր սպանում ե կործանիչ վիշապին:

Վարչալյան կայարանի հանդեպ ձգվող Միարոֆանյան գերեզմանոցի և Ուփոնյա ջրանցքի մեջի յերկար տարածությունն անցնելով իմ ա-

ուջ բացվում էյին մեծ գիշերանոցի ծանր պատկերները: Սովորաբար, գարնանից մինչև ուշ աշուն, Ուլոգնայա շրանցքի յեզերքը և նրա գայրիվայր տարածութիւնը մինչև պղտոր ջուրը, ծածկվում էյին գիշերողներին խմբերով: Յնցոտիների մեջ կորած այդ ձերունիներն ու յերիտասարդները շատ ծանր տպավորութիւն էյին թողնում: Հարբեցողութիւնից գողացող նըրանց ձեռքերն ու վոտները, նրանց երեսի լիւրը կամ խղձալի տեսքը, սղուց ուռած ու կարմրած քիթը, նրանց փողոցային հայհոյանքներն ու կռիվները, այդ բոլորը առջ էյին բերում սարսափ, զրզվանք, և գութ: Պիտերի վարչավայան կայարանն եկած ոտարականը «Ռուս մեծ ազգի» և վոշ մի ներկայացուցիչի շքեաներով, ու մայրաքաղաքի նախագրոսն մարդկային անկման և աղքատութիւն այդ ցայտուն պատկերները տեսնելով, նա Ռուսաստանի մասին ստանում էր, յերևի, ամենամանապատ տպավորութիւնը: Յընցոտիների մեջ կորած, բոպիկները ու աղքատներն, այն ժամանակներում առանձնապես շատ էյին Պետերբուրգում:

Յարական-կալվածատիրական գիշատիչ տընտեսական քաղաքականութիւնը հարկադրում էր քարուքանդ եղած գյուղացիութիւն քաղաքներում վաստակ վորոնել:

Գյուղական նահապետական կյանքից հետո անսովոր շրջան ընկնելով, նրանից շատերը, իրանց բախտին հանձնված, աշխատանք չըզանելով ընկնում էյին, անբարոյականանում ու անցնում վյագեմսկի և այլ վանքերը, ինչպես կոչվում էյին այն ժամանակ գիշերանոցներից մի քանիսը: Նամանավանդ ձմեռը, երբ սառնամանիքը 20 աստիճանի էր հասնում, ծանր էր տեսնել, թե ինչպես նրանք, ժաշված ու քրքրված պինժակներով, կամ մի շապկով ու անպետքացած կոշիկներով, դողդոջուն ու սառած, մի կրպակից մյուսն էյին անցնում: Գինեաներն ու կրպակները չափազանց շատ էյին:

«Պետերբուրգի փողը շատ է, միայն թե ձրի չեն տալիս... Գինեաներն ու պանդոկներ էլ շատ են, գլուխդ էլ կարող ես թեյով լվանալ»: սովորաբար ասում էյին այն ժամանակ:

Վորչափ էլ ծանր լինէր իմ կյանքը, այնուամենայնիվ ամենից շատ էս վախենում էյի, և աշխատում չը թուլանալ այնքան, վոր հարկադրված լինէյի ընկնելու վյագեմսկի, կամ մի այլ անկելանոց, վանք, այդ առանձնահատուկ «Դանթեական դժոխքը», վորտեղից էլ դարձ չը կար, ուր մարդ թողնում էր իր բոլոր հույսերը: Թեև իմ մայրը, զպրոցի յերես չէր տեսել,

այնուամենայնիվ սովորել եր կարգալ, իսկ հայրս մինչև իր մահը մնաց անզորագետ: Ինքն աստվածավախ լինելով՝ ստիպում եր ինձ հաղորդվել ու իր հետ ինձ միշտ եկեղեցի եր տանում: Ես երբեք չեյի հասկանում, թե ինչ են կարգում ու յերգում անհասկանալի ու մեռած սլավոն յեկեղեցական լեզվով: Եկեղեցի գնալը և այնտեղ երկար կանգնելը սկզբում ինձ համար դժվար ու անհասկանալի պարտավորութուն եր: Լսելով, թե ինչպես տիրացուները դասում մենչում եյին, ես կամ հորանջում եյի, աննպատակ այս կամ այն կողմը նայում, և կամ ուզում եյի բոլորովին տուն գնալ:

Յես մնում եյի յեկեղեցական տաղտկալի արարողութուններին մինչև վերջ, մինչև վոր հայրս քաշում եր ականջս կամ մագերս:

Տերտերներին ես չեյի հարգում: Վաղ մանկությունից բազմաթիվ պատմվածքներում լսել եյի տերտերների, սարկավագների, եպիսկոպոսների ու վարդապետների մասին: Հոգևորականների մասին գրված այդ պատմվածքները վիրավորական ու ծաղրալից եյին և շատ աննպատտ նրա համար:

Մեծ տոների ժամանակ, երբ տերտերները խաչով շրջում եյին մեր խրճիթները, թաղումներին, կնուներներին, հարսանիքներում նրանք

այնպես եյին հարբում, վոր կորցնում եյին կամիլաֆիկաներն ու խաչերը: Հայրս առանձնապես և խիստ ստիպում եր պաս պահել: Մեծ պատի վերջի շաբաթ որը հաղորդվում եյինք: Ոստովանվելու յերկրորդ, կամ երրորդ որը գնում եյինք սովորաբար, հաղորդվելու Նովոդիչևի վանքը:

Տուն դառնալիս, ուղղափառները վոչ մի կերպ չեյին կարողանում զսպել իրենց և չեյին կարողանում առանց զինետուն «անցնելու» տուն գնալ: Ողետան դուռն անդադար բաց ու խուփ եր լինում, և մոխրագույն, արաղի հոտով լի գոլորշու վոլորակները տարածվում եյին ամեն անգամ դրսում, երբ ամեն մի նոր ճաշակված ուղղափառ զինետուն եր մտնում: Հայրս ել չեր կարողանում համբերել. «մորդ շասես», շտապով ասում եր ինձ ու ներս եր մտնում, կեղտոտ ու գարշահոտ դուխանը: Վորովհետև տան ճանապարհը բավական երկար եր, իսկ ողետուն-դուխանները շատ, ամեն մի դուխանում մի «թասիկ» խմելով, հայրս տուն եր գալիս ողու «պոլշտոֆը» գրպանում և այնպիսի դրության մեջ, վոր ինձ արդեն վոչին չեր մնում մորիցս ծածկելու:

— Այ դու անխիղճ, խոզ, - սովորաբար գու-

ուում եր նրա վրա մայրս. հարբեցող շուն դար-
ձյալ լակել ես:

Ու այսպես պատի վերջի որերին բարեպաշտ
տրամադրությունը և մեծ տոնի նախորդակը
փչանում էին: Հայրս մորս հետ երբեք բուռնցքի
չէր բռնվում: Այլ լուռ թեքվում էր, հենվում
նստարանին կամ սեղանին և գլխակոր նստում:
Նա փխտում էր հատակին կամ աղտոտ վեղ-
բոյում, ու ստամոքսից ողու հետ միասին, ընկ-
նում էր և «սուրբ հաղորդությունը», «քրիստո-
սի մարմինը», բայց թե չգիտեմ ինչ պատճառ-
ներով այդ բոլորը սրբաբղծություն չէր համար-
վում:

Իմ մանկական հասակի համար մեծ նշա-
նակություն ունեւ Մխորոֆանյան հարեան գե-
րեզմանանոցը: Աշնանը, քամու շաշուֆների հետ,
մեր ականջին համնում էին թաղման թախծալից
եզանակները՝ իսկ գարուն և ամառ միշտ այնտե-
ղից լավում էր սոխակի գեղեցիկ մեղեդին:
Գերեզմանոցում ճոխ բուսականություն կար, նա
փոքրիկ անտառի եր նման և քաղաքի բնակիչնե-
րի համար տոն որերին զբոսատեղի եր ու հան-
գատավայր: Սլավոնների հնազույն սովորությունը,
«քելեխը», կատարվում էր այստեղ եկեղեցական
տոնի սրբ, ոգոստոսի յոթին:

Առավոտվանից գերեզմանատան ուղիները

լցվում էին առեվտրականներով ու այս բոլորը
ու նմանվում էր տոնավաճառի: Ահադին բազ-
մություն գալիս եր այդ սրբ գերեզմանոց: Սուրբ
Վլադիմիրի «Ռուս յերկրի ուրախությունը վոգե-
լից խմիչքն է» պատգամին հավատարիմ այդ որն
ուղղափառ այցելուները բերում էին իրանց հետ
վոգելից ըմպելիքի անադին քանակություն, չնայ-
ած այն հանգամանքին, վոր այդ սրբ վոստիկան
պահակներն ավելի շատ էին և սրա կամ նրա ձեռ-
քից խլում էին ողով ու գարեջրով լի շշերը:

Շրջակա կրպակները, գարեջրատները, գի-
նետները այդ սրբ շատ լավ էին «աշխատում»
իսկ ուղղափառների անագին բազմությունը, գե-
րեզմանատանը հարբում ու երգում էր: Պարում
էին ժողովրդական խաղերի բռնվում. և ուշ
երեկոյան միայն տուն վերադառնում, վոտի վե-
րա հաղիվ կանգնելով: Հարբածների թիվն այն-
քան մեծ էր, վոր թվում էր, թե այդ ամբողջ
բազմությունը մի կողմից մյուսն է ընկնում,
երբրվում... Վայր ընկածներին, վորոնք վոաքի
վրա կանգնել չէին կարողանում, վոստիկանու-
թյունը հավաքում, տանում էր:

Յերեկոյան դեմ շրջակայքի բոլոր վայրերն
լցվում էին հարբածներով: Նրանք վորոնք վայր
էին ընկնում ամայի ճանապարհի այս ու այն
կողմը, և անշարժ մնում էին գերեզմանների

անցքերում, գիշերը սահապաններն անխնա կողողալովում էյին նրանց: Այդ ճանապարհի կողմից ու գերեզմանոցից գիշերվա կեսին չսվում էյին խուլ աղերսալից ձայներ:

— Հայ, հավար, թալանեցին... սգնեցեք... գոռում էյին հարբացները:

Մյուս որը ընկերները հետ ես գնացի գերեզմանատուն: «Քեյեխից» հետո հավատացողներին շատերը գերեզմանները վրա դատարկ շիշեր էյին թողնում, իսկ մենք ժողովում էյինք այդ ամաններն, ու առնում մեզ անմատչելի բուլկին, կոնֆեկալը, քաղցրեղենը, նույնիսկ զբքույկներ:

Շշերից սկսելով, մենք վերջացնում էյինք նրանով, վոր պոկում էյինք խաչերի վրայից բրոնզից ձուլած «սուրբ» պատկերները ու փոքրիկ խաչիկները:

Այդ տեսակ սուրբ պատկերներից ու խաչերից մի քանի ֆունս հավաքելով մենք մուրձերով այնքան էյինք խփում Քրիստոսի ու մյուս սրբերի յերեսներին, մինչև վոր քանդակի գծերը հարթվում էյին, փափկանում: Այնուհետև դարբինները միջոցով այդ սուրբ պատկերներն ու խաչերը մենք կտոր կտոր էյինք անում, և վորսկես թե գործարանի աղբանոցում ժողոված

իրեր, ֆունսը 15 կոպեկով երկաթեղենի խանութներում ծախում:

Կապիկի ճարպիկությամբ գերեզմանատան պարիսպներից ցատկելով փոքրիկերով դարձանոս աղբանոցը, ես միշտ պատռում ու կեղտոտում էյի շարբոս, և նամանվում ճիշտ փոքրիկ մուրացկանի:

Լինում էյին բոպեններ, երբ գերեզմանոցը, վոր միջոց եր տալիս շոկոլադ, կոնֆեկա և ուրիշ քաղցրեղեն գնելու, սարսափեցնում եր ինձ: Այդ իհարկե այն ժամանակ, երբ գերեզմանատան այս կամ այն մասում գանում էյին խեղդվածների դիակներ, կամ յերբ աշնան ու ձմռան գիշերներին հայրս գոռում եր ցամախից:

— Հէյ, Սաշկա, վազիր ինձ համար մի շիշ „СОРОКОВКА“, ողի բեր!»: Գինետան ճանապարհը գերեզմանոցի միջով եր: Յես այն ժամանակը համոզված էյի, վոր խեղդվածները ու առհասարակ մեռելները գիշերները դուրս էյին գալիս գերեզմաններից, և վորսում երեխաներ, նրանց արյունը խմելու համար: Բայց անողոք ճիպոտի հարվածների, ծեծի և սպառնալիքների, կամ մեծերին հնազանդվելու սովորությունը ստիպում եր ինձ կատարելու այդ տեսակ վտանգավոր ճանապարհորդություն:

Սրատարոփ ու սարսափից սառչելով, ես

վոտ եյի գնում այդ զարհուրելի տերի-
տորյան, ու ինձ թվում եր թե ամեն մի խաչ-
քարի հետևից, հետևում են ինձ իրանց պատան-
քի շորերով գերեզմաններից դուրս եկած մեռել-
ները: Ճանապարհ ձգվում եր գերեզմանների
ու խաչքարերի մեջ ու վտանգն ամեն կողմից եր:

Աշնան քամու վշտոցը, ծառերի ճռճոցը,
գիշերային թռչունների աղաղակը, այդ բոլորը
իմ վառ երևակայության մեջ մեկը մյուսից
զարհուրելի պատկերներ եյին առաջացնում:
Փակելով աչքերս և սայթաքվելով, գերեզման-
ների միջից ես վազում եյի սառը քրտնքի մեջ
կորած այդ ուրուականներով լի տարածությունը,
ուր կային և այն աշխարհից եկած սատանա-
ներ ու դևեր:

Հետագայում, «Նովոգեիչիյ» վանքում, գե-
րեզմանաքարերի արձանագրությունները կար-
դալիս, ես հանդիպեցի բանաստեղծ Նեկրասովի
արձանին: Այն վոտանազորի կտորը, վոր փորա-
գրված եր նրա արձանի վրա, ցնցեց ինձ, անջնջելի
տպավորություն թողնելով վրաս:

— Յանեցեք խելացին, բարին, ու մշտականը:

— Յանեցեք. — շնորհակալ եմ, կասի ձեզ սր-
տաբուղիս ռուս ժողովուրդը: Իմ մանկությունը
անցնում եր քաղաքի ծայրամասում: Վատ հագ-
նված, նույնիսկ ցնցոտիները մեջ կրողված՝ ես

միշտ ծայր աստիճանի արհամարհալից վերաբեր-
ւունքի եյի հանդիպում ասեն քայլափոխում: Մի
ինչ վոր բացասական դրոշմ եյի զգում վրաս,
ու յես ինքնակամ կցում եյի ինձ հասարակության
այն տականքին, վոր սև վոսկոր եր կոչվում: Միա-
ժամանակ ես մեծ հարգանքով եյի վերաբերվում
լավ հագնված մարդկանց, վորոնք նման եյին
«պարոններին»: Ինձ միշտ թվում եր, թե նրանք
բարձր, փայլուն, բախտավոր, և ինձ համար ան-
հասանելի մի աշխարհի ներկայացուցիչներ են:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԱՐՋԵՍՏԱՆՈՑ ՄՏՆԵԼԸ.

Ա Շ Ա Կ Ե Ր Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1884 թվին լրացավ իմ 13 տարին, երբ
ինձ ընդունեցին յերկաթուղու դեպոյի վերանոր-
րողության արհեստանոցը: Թեև փականագործ
լինել իմ ցանկությունն եր, թեև բախտը չեր շոյել
ինձ ու յես անցել եյի արդեն դաժան կյանքի
շկուրան, բայց ձերուկ բժիշկ Ալեքսի Եգնատո-
վիչ Սոկոլովի իշխանության տակ անցելուս հենց
մյուս օրը, յես ուզում եյի փախչել արհեստա-
նոցից: Փոխանակ արհեստ սովորելու հնարա-
վորություն տալու, առավոտվանից մինչև յերե-
կո ինձ վազեցնում եյին օդի գնելու: Իմ կույր

բախտից Սոկրոտին ել չնայած իր սպիտակ մորուքին, արհեստանոցի ամենաթունդ հարբեցողներ: Նրա «բժկարանը» գալիս էյին բոլոր փականագործ վարպետները, խորհրդակցում, մտածում, թե արդյոք կարելի՞ չե ելի մի անդից փող ճարել՝ նորից ողի խմելու համար: Յերբեմն հանգանակություններ էյին կազմակերպում և հենց վոր մի քիչ փող էյին ճարում, բժիշկը գոչում էր. «Ե՛յ, Սանչկա, վազիր մի պոլշտոֆ բեր»:

Գինեատունը գանվում էր մի վերստ հեռավորության վրա: Ի նկատի ունենալով, վոր պետք էր մոլորեցնել գործարանի պահապաններին, վորոնք հակում էյին, գործարան ողի չը բերելուն, ևս ստիպված էյի սարսափելի ցրտերին անցնել այն տարածությունը մի բանվորական շապկով ողու շշերը պահելով իմ ծոցում: Ի հարկե, ևս միշտ ցրտահար էյի լինում ու շատ հաճախ հիվանդանում: Առանձնապես շատ էյի վազում ողի բերելու այն ժամանակ, երբ խմողները ձեռքը փող էր բնկնում, կամ ոտճիկ էյին ստանում: Այլքսի Իվանովիչի ու մյուս հարբեցողների գլուխները խմելուց հետո պտավում էյին, և նրանք մի անհաղթելի պահանջ էյին դրում նորից խմելու:

Խմում էյին բոլոր պատեն ու անպատեն զեպքերում: Երեխայի ծնունդը, կնունքը, թա-

դումն ու հարսանիքները — այդ բոլոր դիպվածները հավերժանում էյին կոնծարանությամբ:

Երբ մի նոր բանվոր գործարան էր ընդունվում, նրան ստիպում էյին ընկերներին «մաղարիչ» տալ: Երբ նա վերջնական հաշիվ էր ստանում, դարձյալ «ողու հարկ էյին» պահանջում: Յեվ այդ բոլոր զեպքերում ևս որական միքանի անդամ, լսում էյի այս հրամանը.

— Ե՛յ, Սանչկա, վազիր մի պոլշտոֆ բեր:

Առանձնապես սաստիկ հարբում էյին գործարանում կախված սուրբերի պատկերների համար կատարվող մաղթանքների օրերին:

Այդ սրվա, մաղթանքը վերջանալուց հետո, բոլորը հարբում էյին ու փողատի, կամ յեկեղեցական շուռճարի նման փովում: Երբ ամեն ինչ ողու էյին տալիս, վատնում, և զբաղնում այլևս վոչ մի կոպեկ չէր մնում, հարբեցողների խորհրդակցությունը վորսշում էր խորամանկության դիմել, բժիշկը գոռում էր.

— Ե՛յ, Սանչկա, վազիր աղած չոր ձուկ (треска) բեր:

Մինչև վօր ևս գնում էյի ձուկ գնելու, իմ հարբեցողները մեծ ու փոքր մկներ էյին վորսում. նրանք բռնած մկները ստակացնում էյին, տափակացնում ու վարպետությամբ անդավարում իմ գնած ձկան փորում: Երբ, հարբե-

ցողները խորհրդի կարծիքով, մկները բավական «փափկանում» էյին ձկան փորում, փականագործներից մեկն ինձ հետ միասին գալիս եր այն խանութը, վորտեղից ես գնում էյի ձուկը:

— Սաշկան այս ձուկը ձե՞զնից ե գնել, — սպառնալից հարցնում եր փականագործը:

— Այո, պատասխանում եր խանութպանը, ձուկը շատ լավն ե, առաջին տեսակի յե:

— Ի՞նչ առաջի տեսակի. — գոռում եր փականագործը. — տրեսկան փթած ե ու մկնոտ:

— Ի՞նչպես թե մկնոտ, անկարելի յե:

— Այո մկնոտ ե, տես այժի մորուք, տես ի՞նչ ես ծախում: — Ա՛յ, մենք հիմա կը գնանք վոստիկանություն, արձանագրություն կը կազմենք, սպառնում եր փականագործը:

Այս բոլորը վերջանում եր սովորաբար հըրանով, վոր խանութպանը, թեև գիտենալով, վոր այդ բոլորը խաբեբայությունն ե, բայց սկանգալից ե խայտառակությունից խուսափելու համար, հաշտվում եր ու փոխարենը տալիս եր ողու մի շիշ ե մի յերկու ֆունտ ել լավ, արդեն «առանց մկան» տրեսկա, նախաճաշիկի համար:

Բանվորներից մի քանիսն այն աստիճան թունավորված էյին սպիրտով, վոր ողու մի փոքրիկ բաժակ խմելուց հետո, ընկնում էյին

զառանցանքի մեջ: Նրանց աչքերին հաշող շներ, ե սատանաներ էյին երևում:

Մի քանիսը ասում էյին. «Ա՛խ, եթե ինձ մի տա՛առ ողի տային, ես մի կուշտ կը խմեյի ու հոգիս կ'ավանդեյի»...

Այն ժամանակվա բոլոր հին վարպետներն անցել էյին փոքրիկ տնայնագործ արհեստանոցի հինգ տարվա աշակերտության դաժան շկուլան: Մտաբերելով թե ի՞նչպես եր արհեստավորի ոգնականը, աշակերտության առաջի տարվա ընթացքում, ուղարկում նրանց ողի բերելու, կամ թե ի՞նչպես վարպետը սոված եր պահում, վոչինչ չեր վճարում, ու փայտով ծեծում եր անխնա. նրանք գտնում էյին, վոր մենք, խոշոր ձեռնարկությունների աշակերտներս, ուր արհեստեն սովորեցնում ու դեռ նույն իսկ վճարում ել են — շատ բախտավոր ենք:

— Դու, Սաշկա, չըգիտես թե ի՞նչ բան ե խայթող մտրակը. ասում էյին նրանք ու նկարագրում, թե ի՞նչպես յերբեմն բարկացած վարպետը քաշում եր իրենց ալանջները, կամ փայտով ծեծում...

Յեվ վորովհետև վոչ իմ ալանջներն էին քաշում, վոչ ծեծում, ես ինձ դեռ բախտավոր պիտի համարեյի:

Առանց տաք հագուստի, սաստիկ ցրտերին

վազվզելուց և խիստ ցրտահար լինելուց ու մրսելուց մի տարի հետո միայն, ես հնարավորութիւն ստացա բժիշկ Սոկոլովի իշխանութեան տակից ու անցնել փականագործարան:

Շարունակ հասակավոր փականագործներէից լսելով, վոր ես գեռ բախտավոր պետք ե համարեմ ինձ, վորովհետեւ վոչ ծեծ եմ ուտում, վոչ ել նման բաների յենթարկվում ե որական ել 30 կոպեկ գեռ ոտձիկ ստանում, ես միանգամայն հաշտվեցի փականագործ աշակերտի գրութեան հետ: Վորոչ չափով կոպտացել, ընկել էյի, դողարել էյի գիրք կարգալուց, սովորել էյի ծըխել ու հայնոյել ռուսական ամենանվայել հայհոյանքներով: Սյդ հայնոյանքն արհեստանոցում լսվում եր ամբողջ որը. «քո մերդ, քո մերդ, քո մերդ»... գոռում էյին մի անկյունում: Սրան վորպես պատասխան՝ «քո մերդ, քո մերդ, քո մերդ»... լսվում եր մյուս անկունից:

Բանվորական որն արտաժամյա աշխատանքով «յերեկոյիկներով» միասին տևում եր առավոտա յոթից բինչև երեկոյան տատը և կեսը: Աշխատում էյին նույնիսկ բոլոր կիրակի որերը, և այնպիսի մեծ տոներին, վորպիսիք են ծնունդը գատիկը և այլն:

Շարունակվող ծանր աշխատանքից ես սկսեցի ավելի բթանալ: Իմ ընկեր Վոլոդ-

կա Վազների հետ երեկոները մենք գնում էյինք գարեջրատուն: Հարբած վերագառնալով, Վոլոդկան, վոր ֆիզիքայես շատ ուժեղ եր, վայր եր գլորում լապտերների սյուները ձգում եր, գերեզմանատան ճանապարհին: Ես, ի հարկե, ոգնում էյի նրան...

Աշունն ու ձմեռը շատ անգամ կազմակերպվում էյին մուշտակոխներ: Երկու հակառակ բանակ իրար դեմ էյին դնում, կարծես պատը պատի վրա: Երբ անչափահասների հետ խառնվում էյին և հասակավորները, կոխվը յերբեմն անողորմ բնույթ եր ստանում: Սյդ «ճակատամարտի» վերջանալուց հետո բոլորը ցրվում էյին աչքերի տակ կապույտ ուռուցքներով, ջարդված ատամներով, արնաթաթախ գեմքերով ու վիշըրված կողերով: Մի որ ել, երբ ինձ գետին գլորեցին, ես մի այնպիսի հրեշտիկ հարված ստացա մեջքիս, վոր անգամ, գրեթե կիսամեռ, մնացի:

Մեր արհեստանոցի վարպետների կազմն այնքան ել միակերպեր չեր: Ռուսները կեսից մի փոքր շատ էյին. մնացածը ֆիններ էյին, գերմանացիներ, լատիշներ ու լեհեր: Գերմանացիների ազդեցութիւնը շատ մեծ եր: Պետերբուրգ-Վարչալյան երկաթուղու գեպոյի պետի ավագ ոգնականը, Վազներ Իվան Իվանովիչն ու ա-

վագ մոնտյոր Յանիկեն—գերմանացիներ եյին: Նույն իսկ շոգեկառքերի նորոգութեան մատչաններէ արձանագրութեանը կատարվում եր գերմաներեն լեզվով, և բնիկ ուսու բանվորները, առավտաներն արհեստանոց գալիս, վոչ թե «բարև» եյին ասում, այլ «Գուան-Մորգեն»:

Գերմանացիները, Ֆիններն առավելապես, տարբերվում եյին ուսաներից: Ռուսներն իրենց ուժիկը ստանալիս չեյին կարողանում համբերել, անսխալապես հարբում եյին ու յերեք որ աշխատանքի չեյին գալիս: Գերմանացիներն ողի խըժում եյին ամեն որ բայց կանոնավոր, և այդ չեյր խանգարում նրանց առորյա աշխատանքի գալուն: Բացի այս նրանք լավ վարպետների համբավ ունեյին և համարվում եյին իրենց գործը լավ իմացող բանվորներ: Նրանք ել արժանապատվութեամբ եյին պահում իրենց, հագնվում եյին երոպական տարազով, գործարանից ել պղինձ, գործիքներ և նման իրեր ավելի քիչ եյին գողանում: Գրագետ և ուսաներից ավելի կուլտուրական լինելով՝ նրանք վոչ միայն չեյին սիրում ուսաներին, այլ և արհամարանքով եյին վերաբերվում ու քննադատում այն ամենը, ինչ վոր ուսական եր: Ոտարականն այլ երկիր գնալով,— ավելի շուտ, քան բնիկը,— նկատում ե նրա պակասութեանները: Նա պետք ե յերկար

ապրի ոտար երկրում, մի քանի տարի, վոր կարողանա այդ ժողովրդի լավ հատկութեանները տեսնել: Ալեքսանդր ՎՎ-ի ժամանակ Ռուսաստան գալով ոտարականը հանդիպում եր բարբարոսութեան, ասիական մտածելակերպի, և իր չորս կողմը նա տեսնելով ստրկութեան և ծայրահեղ անկուլտուրականութեան, չեյր կարող Ռուսաստանից բարենպաստ տպավորութեան ստանալ:

Ֆինլանդացի ու լեհ բանվորների մի մասն առանձնապես խոր ու սաստիկ ատում եյին այն ամենը, ինչ վոր ուսական եր... Շփվելով նրանց հետ, ես ինձ հարց եյի տալիս— ի՞նչու, ի՞նչ պատճառով նրանք մեզ այդ չափ ատում են և արհամարհում: Յեվ այդ հարցը սթափեցնում եր մեզ, ստիպում եր մտածելու և ավելի լուրջ քննադատողի պես վերաբերվելու մեր ուսու իրականութեանը:

Յերկաթուղու բանվորութեան մեջ ամենահետամնացները համարվում եյին հնոց վառոդներն ու հասարակ բանվորները: Նրանք բնակվում եյին գորանոցներում, վոր ապշեցնում եր իր կեղտոտութեամբ: Դրանք գյուղացիներ եյին, գյուղից բաժանված, Պետերբուրգ եկած՝ վորպես զի մի բան վաստակեն ու իրենց գյուղերը դառնան: Այդ մարդիկ շատ դիմացկուն եյին,

ու շատ սահմանափակ կարիքներով: Վերոշ ժամանակ աշխատելով ու փող հավաքելով, հնոց վստողը յերեք տեսակ հագուստներ եր գնում, «тройка»-փայլուն կոշիկներ, ալ գուճախի շապիկ, գոտի, գարմոն ու այնպես վերադառնում եր գյուղ: Ազատ ժամերին նրանք խմբով շրջում էին փողոցներում, նվագում էին գարմոնի վրա ուսսական մոտիվներ և երգում: «Յես պիտեք ապրեցի, շատ փող վաստակեցի, աղջիկներին թաշկինակ գնեցի» և այլն: Փականագործները, մեքենավարները կազմում էին բանվորութեան արոստոկրատիան: Հագուստով ու սովորութեաններով նրանք շատ քիչ էին տարբերվում գերմանացիներից և ֆիններից: Յեվ գուցե ակամօ՝ աշխատում էին նմանվել նրանց: Գրպանի ժամացույցը շոտլանդացիները համարվում մատչելի չեր բանվորին: Վորպեսզի շուշանան աշխատանքներին, բանվորները գալիս ու խմբվում էին գործարանի գարբասի առաջ գուղոկից դեռ 20-25 րոպե վաղ: Սպասողական զրութեան մեջ, ամառը նրանք շարվում էին նստարանների վրա, կամ խմբվում գարբասի առաջ, իսկ ձմեռը հավաքվում էին սրահուպան Շեստակովի տնակում: Հին սերնդի ներկայացուցիչների թվում գանվում էին այնպիսիները, վորոնք հիշելով «անցած, — դնացած քնդր որե-

րը», մասամբ ցավում էին, վոր անցել է ճորտական իրավակարգը: Պառավ Շեստակովը Նիկոլայեվսկի հին սաղաթների վերջի ներկայացուցիչներից մեկն եր: Նա իր կյանքի մնացորդը անց եր կացնում Մոսկվայի գաստավայի այն կողմը «Չեսամանկի» անկելանոցում: Իսչ շոր և հագնելու լինեն, նրանք, այդ 60 տարեկան ծերուկները հենց առաջին անգամից կարելի եր ճանաչել Նիկոլայ I-ի գինվորներին, վորոնք անցել են 25 տարվա ծառայութեան պարտադիր շրջանը և վորոնց ամբողջ եութեան մեջ տպավորված էին Նիկոլայ I-ին վերագրված խոսքերը. «տասը հոգու մեռցրու, մեկին սովորեցրու»:

Ամուր, կտրուկ, գինվորութեան բոլոր սարսախները վերապրած, ծերունի Շեշտակովն արհամարհանքով եր վերաբերվում նոր սերնդին ու համոզված եր, վոր կը վոչընչանա: Նա միշտ անցյալի ազդեցութեան աակ եր, հիշում եր իր արշավներն ու Մեվասասույլի պաշտպանութեանը: Յերը պետք եր լինում բանվորներին կանչել, վայր ընկած շոգեկատքը բարձրացնելու համար, Շեստակովն ինչպես երբեմն գնդի առաջ, գոռում եր շոգեկառքի հանդեպ. «գեպի շրջան, գեպի իր տեղը» և այնպես վորոտալից, վոր մենք միշտ ցնցվում էինք:

Նա, գարբին Կուղիմիշը, ատաղձագործ Կու-

պլը, միշտ տքնում եյին ապացուցանելու, վոր ճորտական իրավունքի վերացումից հետո մարդիկ փչացել, անբարոյականացել են, վոր չը կար այլևս «աստծու յերկյուղն ու պատկառանքը դեպի մեծերը»: Հաստ ձեռափայտը գետին գարկելով, Կուզիմիչն իր սպիտակ մորուքով և խիտ, ըստ ուսական սովորութեան բոլորած և խուզած մագերը տմբամբացնելով գոռում եր երխտասարդների վրա — «Հա, ձեզ պեսք ե ախոռատուն տանել ու մի 50 ճիպոտով մի լավ գաղել»:

Իսկ ծերուկ Լատելը, փականագործ Ասսերը, հանդես եր գալի ուս հետամնացութեան ու կոպտութեան դեմ: Գերմանական կուլտուրայի կողմնակիցը լինելով ու շեշտելով միշտ, վոր ևրոպացիք բարձր են ուսմանքից, նա իր հարգանաց հավաստիքն եր տալիս այնպիսի ուսմաներին, վորպեսին եր Կոպլը: Թեև այդ ծերուկի յերկար ու փալասի պես փոված մորուքի մեջ պատահում եյին կերակրի մնացորդներ, դարման, բայց այնուամենայնիվ նա դեռ բավականին ժիր եր ու կենսունակ:

Ուրախալի եր տեսնել, թե ինչպես ե կացինը «խաղում» եր նրա ձեռին: Թե ինչպես նա, այդ ուս ատաղձագործը, մի ուրագով և՛ տուն եր շինում, և՛ սայլ, և՛ տան կարասիք պատրաստում.

մի խոսքով կատարում եր աշխատանքներ վորոնց համար գերմանացուն հարկավոր կը լիներ գործիքների մի ամբողջ ժողովածու: Դիտելով ուս բանվորի աշխատանքը, նա խստութեամբ ասում եր. «Դուք, ուսմաներդ, ընդունակ ժողովուրդ եք, միայն տերտերներն են ձեզ խանգարում»:

Յերիտասարդների շրջանում, աչքի եյին ընկնում մի քանիսը, վորոնք ակամայից ցուցադրում եյին մեր առաջադիմական ինտելիգենցիայի գծերը: Մի անգամ, 1885 թվին, երբ առավոտը պղնձի արհեստանոցում, հնոցն եյին վառում իսկ ծերուկ Սոկոլովը գանգատվում եր կյանքի դառնութեաններից, բանվոր Սեմյոնովը, հառաչելով ասաց հանկարծ. «Մի, գոնե հեղափոխութեանը շուտ համներ»: Յերբ այդ անհասկանալի խոսքերը լսելով ես նայեցի, նկատեցի, թե ինչպես բժիշկ Սոկոլովը գունատվեց, և ինչպես բռնեց Սեմյոնովի ձեռքն ու սարսափած մրմնջում եր. «Գժվել ես, ի՞նչ ե... լսիր»...

«Հեղափոխութեան» բառը, վորը այն ժամանակ ինձ անհասկանալի յեր, շատերին անկասկած հայտնի եր: Այդ այն ժամանակն եր, երբ դեռ չեյին մարել նարողնիկների ումբերի պայթյունները: Ես ակամայից մտաբերեցի, վոր նույն

խի հայրս, իր բոլոր ազխութեամբ հանդերձ, զխտեր այդ բառը:

1878 թվին, երբ ես Մոսկայի գաստալի պարսպին հենված կանգնած եյի, և ծնողներես հետ զխուժեմ եյի տաճկաստանից հաղթութեամբ վերադարձող Պետերբուրգի գվարդիայի գնդերի հանդիսավոր մուտքը, Մոսկվայի հաղթական կամարներով, հենց այդ ժամին մեզ ազարակից բաժանող սլաքալի յետևում, մի ինչ վոր մարդու կարմնավորեցին:

Առաջ եկավ շփոթութեան:

Յերբ մենք տուն եյինք վերադառնում հորս ձեռքերը դողողում եյին. նա ինչ վոր բաներ եր ատում ուսանողների, ուսմբերի ու հեղափոխութեան մասին: Գիշերվա հերթապահութեանից վերադառնալով, հայրս բավական հաճախ պատմում եր ուսմբերի պայթյունների մասին, վոր նրա կարծիքով ձգում եյին լիբր անաստվածները՝ ուսանողներն ու նիդիլիտաները:

Իմ հիշողության մեջ կենդանի յե մնացել մարտի մեկը, այն որը, յերբ նարողութից Գրենսեցիու ձեռքով սպանվեց Ադեքսանդր III-րդ թագավորը: Ես այն ժամանակ սովորում եյի Պետերբուրգի քաղաքային տարրական գպրուցում: Վարժապետն ընկճված տեսքով, առանց ակներև պատճառի, փակեց ուսումնարանն ու

մեզ տուն ուղարկեց: Փողոցներում վախեցած վոսակիանները հրամայում եյին փակել խանութները, մագաղինները: Արտակարգ արագութեամբ բոլորն ել երկյուղալից տեսքով փակում եյին ու թագնվում: Մինչև տուն հասնելս զրեթե ամբողջ քաղաքը մեռել եր:

— Մայրիկ, ինչու մեզ գալրոցից արձակեցին, ինչու եմ փակում բոլոր խանութները:

— Թագավորին սպանել են. — երկյուղալից պատասխանեց մայրս, — սը, սպանեցին անխիճած նաստվածները, սպանեցին մեր բնայուզիային:

Եզանակը բավական մեղմ եր, փուխը ձյունը հարվում եր, բարձր աղաղակում եյին ճայակներն ու ագռափները: Գարնան շունչն եր բուրում: Այդ որվանից իմ հիշողության մեջ մնացել և մի ապավորութեան, մի բան վորը հիշեցնում և զարնան գալը:

Տասնակեց տարեկան պատանի լինելով ես զեռ այնքան ել լուրջ չեյի, ամենևին չեյի հասկանում, թե ի՞նչ և նշանակում հեղափոխութեան բառը: Կյանքը յես ընդունում եյի այնպես, ինչպիսի վոր նա կար: Ես կարծես թե գնում եյի ջրի հոսանքով, առանց հոգալու, թե ո՞ր կը տանի զետակի սրնվաց հոսանքն իմ խոռվալից մակույկը: Ուշադիր լսում եյի, թե ինչ կն խոսում կուղիմիչը, Շեստակովն ու գորբին կուսկովը, բայց

չեյի կարողանում հասկանալ, թե նրանցից վորն է իրավացին: Ինձ շատ հետաքրքրում էր իմ փականագործ—ճախարագործ արհեստը, իմ մեջ հղանում էր աշխատանքի ուրույն բանաստեղծությունը: Ինչ գուրեկան էր լսել գործարանի գուղուկը, մուրճերի ծանր հարվածները, յերկաթի դղրդյունը և շարժվող մեքենաների աղմուկը: Ես բավականութամբ սդոցում էյի խարտոցով, հարվածում էյի մուրճով, սրում էյի, և բուրդի բանեցնում: Բայց մեր փոքրիկ արհեստանոցը չէր բավարարում ինձ: Երազում էյի բազմահագար խողովակներով գործարանների մասին, երևակայում էյի գործարանային մեծ քաղաք, ուր փողոցներում մի գործարանը հաջորդում է մյուսին, ուր սև ծուխը ծածկում է յերկինքը:

Վերին աստիճանի անախորժ ու ցավալի եր ու ես չեյի ուզում համաձայնվել Ֆինլանդացիների ու գերմանացիների հետ այն բանում, վոր ուուաները չը գիտեն մեքենաներ շինել, վոր բուլսր մեքենաները շինված են այնտեղ, արտասահմանում: Յե՛վ ես երազում էյի այն ժամանակի մասին, յերը մենք, ոուաներս ել կը սկսենք շինել նույն, բայց գուցե և ավելի լավ մեքենաներ, քան թե նրանք, վորոնք բերվում էյին ծովի այն ավից: Յե՛վ ինձ թվում էր, վոր այդ ժամանակը պիտի գար:

ՄԵՄ ԴԱՐԲՆՈՑ ԱՆՑՆԵԼԸ

Արհեստում կատարելագործվելու համար ես անցա Վարշավյան յերկաթուղու գլխավոր արհեստանոցները: Մուսյլ ժամանակներ էյին, «Народная Воля»-ի դիմաց ինքնակալությունը հաղթական էր: Ժողովրդի բարեկամների ձայնը մեռած էր: Տերտերները գլուխ էյին բարձրացրել: Գործադուլի և բանվորական շարժման մասաին ես վոչվոքից վոչինչ չեյի լսել: Պրոֆմիություններ չը կային, անհատ բանվորները և նարոզովոյցիներին համակրողները, ընդհանուր հալածանքից խուսափելով, բուրովին կղզիացան ու առանձնացան: Շարունակ ծանր աշխատանքից ես ավելի բթանում էյի: Վոչինչ չեյի կարողում: Նամանավանդ ոտար բառերով լի լրագրները ինձ համար չինական լեզվից ել անմատչելի էյին:

Սկսեցի նկատել, վոր մոռանում եմ գրելը: Ինձ ծածկել էր կարծես թե, գիշերային խավարը, և ես անցել էյի դեպի այն խոր քունը, վորով քնած էյին բանվորական մասսաները: Ընկեր բառը դեռևս անձնական բույթ էր կրում: Փոխադարձ ոգնության կասսաներ չը կային: Ամեն մի բանվոր իր ճակատագրին հանձնված՝ ընկերական վորեւ ոգնության սպասել չէր կա-

րող: Գործարաններում տիրում եր ստրկությունը, և ծաղկում լրտեսությունը: Արժանապատուության գիտակցությունը բանվորական շրջանում շատ բացառիկ հատկություն եր, վարպետն ու նաչաճնիկը թագավոր եյին ու աստված:

Սովորաբար նրանք գիտեյին վոչ միայն այն, ինչ վոր կատարվում եր գործարանում, այլ և այնպիսի բաներ վորոնք լինում եյին բանվորներէ ընտանիքներում: Երբ նրանցից մեկն անցնում եր արհեստանոցով, բանվորներն առանց սպասելու նրա բարեկին, իրենք եյին շատ անգամ քծնանքով գլխարկները հանում և ասում. «բարե ձեզ, պարոն վարպետ»: Առանց բացառության բոլոր նաչաճնիկները, վարպետներն, ու շինովնիկներն անխնա կողոպտում եյին արքունիքն ու կաշառք եյին առնում: Յարական ստրկության այդ անիծված ժառանգությունը վարակեց և բանվորներին: Գործարանից տանում ու գողանում եյին ամեն բան, ինչ վոր կարողանում եյին: Նույնիսկ միմիանցից գործիքներ եյին գողանում: Կյանքի իմաստն եր. — «մի քնիր՝ ականջդ սուր պահիր»:

Եթե մոռացկոտ ճախարագործից գողանում եյին փորագրելու գործիքը, մի կտոր մետաղ պողպատ մաքրելու համար, վոր սովորաբար ընկած եր սրոցաքարի մոտ, ուր բոլորը հերթ եյին կան-

գնում գործիքներ սրելու համար: Տեսնելով, թե ինչպես են «թոցնում» վարպետի փորագրելու գործիքը, նրանք քրքիջով եյին պատասխանում նրա «ճեր ե փորագրիչս» հարցին: Գողանալ «թոցներ», խաբել, լավ գործ եր համարվում: Շիտակ, ճիշտ մարդուն, վոր սուտ չեր խոսում ու գողություն չեր անում, հիմար ու տարորինակ եյին համարում: Գողության առաջն առնելու համար, կառավարությունը դաժան խուզարկություններ եր կազմակերպել մուտքերի մոտ. բայց այդ ել չեր ոգնում: Բութքերը, ինչպես ասում եր Ոստրովսկին, «դաժան» եյին: Եթե նոր բանվորը հրաժարվում եր «մաղարիչ» տալ, նրանից վրեժ առնելու համար մի կերպ հեռացնում եյին գործարանից, եթե նա նույնիսկ սովամահ լիներ այդ միևնույն եր: Նրա վերաբերմամբ ամեն տեսակ լրբություններ անում եյին որինակ մեքենայի անիվների առանցքում երկաթի կտորներ եյին նետում, մեքենան փչանում եր, ջարդվում, իսկ բանվորին արձակում եյին գործարանից: Զվարճանում եյին նրանով, վոր պոչեր եյին կապում կեղտոտ ցնցոտիներից, մոռացկոտ ու տարված բանվորի փեշերից, և հոհում, ծիծաղում եյին, երբ նա չը նկատելով այդ պոչը, անց ու դարձ եր անում արհեստանոցում: Երբեմն այդ պոչը հրդեհում եյին: Երբ վախեցած բան-

վորը, ձեռքերն այրելով, պոկում եր այրվող կառնները, արհեստանոցում բռնկում եր ընդհանուր ծիծաղ:

Վորչափ և ծանր եր իմ կյանքը, բայց շոգեկառքերի վերանորոգության արհեստանոցում, այնքան ել անտանելի չեր: Մթնոլորդի իսկական դառնությունը ճախարագործ հաստանոցումն եր, ուր ինձ վիճակվեց աշխատավարձի բոլոր քաղցրությունը:

Քանի զեռ ես մտում եյի շոգեկառքի ընթացիկ բեմոնտի փոքր արհեստանոցում, ուր գտնվում եր միայն մի խառատի, ես մի կերպ ճախարագործ արհեստը սովորեցի, աշխատում եյի որով, ծերուկ մոնտյոր, գերմանացի Յանիկեյի անմիջական իշխանություն տակ, ես չգիտեի, թե ի՞նչ ե «Кувькикамать» (մորը հայնոյելու ոռուսական մի հին ձև ե) խոսքը, վորը ինձ բացատրեցին հին բանվորները: Իմ արհեստը յես շատ եյի սիրում և երազում եյի ոռուս մեքենագործության զարգացման մասին: Իմ առաջ ծավալվում եր մեծ քաղաքում ապրելու հեռանկարը, ուր գործարանների հազարավոր խոկովակները ծուխ շնչում և սթնեցնում իրենց շորս կողմն ու յերկինքը:

Գերմանացի Յանիկեն, վոր իր հայրենիքում սափրիչ եր, Ռուսաստան գալով, ծանոթացավ

շոգեկառքի կադմակերպության հետ: Նա սովորեց շոգեկառքը դամկրասներով (գործիք, վորով ծանրություններ են բարձրացնում) բարձրացնելը, շոգեկառքն անիվներով իջեցնելը ու այդ շոգեկառքի մասերի ուղղելը: Բայց և այնպես, վոչ մի գործիք բանեցնելու շնորք չունենալով՝ վորը պետք ե գիտենա դարբինը կամ մոնտյորը՝ վոչ մի հասկացողություն չունենալով՝ ճախարակային գործում, նա կառավարում եր ամբողջ արհեստանոցը: Գերմանացու սովորության համաձայն, ամեն մի կես ժամից հետո մի փոքրիկ բաժակ ոռուսական ողի խմելով, երեկոյան դեմ հարբում, կարմրում եր, ճակնդեղի նման. հազիվ եր վոտի վրա կանգնում: Սովորաբար նա բավականանում եր նրանով, վոր երբեմն գոռում եր. — «Գործի անցիր, Սնչկա, շուտ, շոգեկառքը սպասում ե»:

Բայց կյանքի մասին ունեցած եմ բոլոր հասկացողությունները տակն ու վրայեղան, երբ ճախարակային մեծ արհեստանում հանդիպեցի աշխատավարձի վորակային սխտեմին (сдельная плата): Վերջինս, ինչպես հայտնի ե, կապիտալիստի համար շատ ձեռնտու յե: Բանվորների վրա լրատությունը մինիմումին հասցնելով, նա հոսնում ե աշխատավարձի վերջական պակսեցման: Այն երկրներում, ուր բուրժուազիան սե-

փակնացնում ե վոչ միայն աշխատանքի հավելյալ արժեքը, այլ և «աշխատում ե», նրա գգույշ իջեցման համար, այսպիսի դեպքեր կարող ե առաջ բերել տեխնիկայի բարվորումը: Այդ պայմաններում բանվորի դրուժյունը համեմատաբար, բայց վոչ բացարձակ կերպով, վատթարանում ե:

Ռուսաստանի բուրժուազիան տեխնիկայի պատրաստ օրինակները վերցնում եր արևմտյան Յեվրոպայից, նա չեւ աշխատում, և արտադրության բարելավման մասին ել քիչ եր հոգում: Գնահատումների իջեցումը մեզ մոտ կատարվում եր անգաղար, վորն ուղղակի վատթարացնում եր բանվորների դրուժյունը: Բայց վորչափ և ծանր ե լինում մարդու դրուժյունը, և ինչ ստորացուցիչ պայմանների մեջ ել նա չի ապրում, այնուամենայնիվ, մեծ մասամբ նա հարմարվում ե այդ պայմաններին: Բանվորների մեջ միշտ կան ընդունակներ, վորոնք կարողանում են բոլոր գնահատումներում մշակել այն նորման, վորը վորոշված ե, և վորի յետևից գնում ե ամբողջ մասսան: Բայց բանվորական շրջանում միշտ կա և վորքամանուկներ, վորը, վորչափ ել լարի իր ույժերը, այնուամենայնիվ միշտ ետ ե մնում ու նրանց համար են կարծես բոլոր անբախտություններն ու վարպետների պատիժները:

Անցնելով աշխատավարձի գնահատմանը բայինը (Сделная плата), ես ավելի քիչ եյի հարմարվում քան ուրիշները, և ինձ դասեցին միջակների, բայց գուցե և վատ բանվորների շարքը: Կամաց-կամաց բոլոր երազներս ցնդեցին: Ճախարագործ մեծ արհեստանոցի յերկինքն ինձ շատ փոք եր թվում, բայց և այնպես այդ արհեստանոց ստիպում եր ինձ մտածել կյանքի իմաստի մասին:

ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԴՐՈՒՄՆԵՐ

Եկավ 1887 թվի դարունը: Յեւ 16 տարեկան եյի: Չատկական շաբաթը նոր եր անցել: Ես հիվանդ եյի: Մեծ պատի յոթը շաբաթվա դաժան դիետից հանկարծակի անցնելով զատկին— թաթլման և ուտիքի կերակուրները, առաջացրին ստամոքսի սաստիկ խանգարում: Չատկի գիշերվա բանաստեղծական տրամադրությունը, նրա խավարի մեջ շողշողացող կրակը, զանգերի անույշ զողանջները, և միամիտ հավատս դեպի հարություն առած աստվածը, փշայրեց կաթսանների մոտ աշխատող բանվոր Անտոնը: Նա շարել եր դրսում իր զատկական թխվածքները, և խոովեցնում եր ինձ իր պատմություններով:

— «Տես, Սաշկա, յերկար բաշավորներն են գալիս, տես, ի՞նչ փոր ե, տերտերի փորը, իսկ երեսը, դունչը, այնքան կարմիր ե, վոր քիչ ե մնում տրաքի: Ապա տիրացուն, տիրացուն, տես, ճշմարիտ, կարծես խոզ լինի: Իսկ և իսկ քուռակի ջինս ե»: Տերտերն ու տիրացուն հիրավի յերկունս ել շատ հաստ էյին: Տիրացուն, զատկական թխվածքների մոտով անցնելիս, թրխվածքներն հավաքելով շարունակ կրկնում եր. «Տվեցեք, ուղղափառներ, ավեցեք, ավողի ձեռքը չի պակսի»:

Կիրակի որը, ժամը յերեքին, երբ կեր ու խումը վերջացնելուց հետո, ես ձեռներս էյի լվանում այդ տերտերներին չը սիրող Անտոնը մոտեցավ ինձ:

— Գնանք, Սաշկա, մի մի բաժակ ել խմենք:

— Չեմ ուզում. — պատասխանեցի յես. — հիվանդ եմ:

— Կնիկ խո չես. — շարունակեց նա. — ի՞նչ ե, կարմիր աղջիկ, վախում ես ողի խմելուց: Գարեջրատանը Անտոնը գարեջրի բաժակը կիսով չափ ողով լցրեց: Ողու և գարեջրի գարշելի խառնուրդ գլուխս խփեց: Ծանր աշխատանքով, պատուց կերակուրներով ու հիվանդությունով թուլացած որդանիզմս չըկարողացավ տանել: Յես շատ շուտ հարբեցի, այնպես, վոր վոչինչ այլևս

չէյի հասկանում, թե ի՞նչ եր խոսում Անտոնը մեզ մոտեցած ընկերոջ հետ: Վորպեսզի չը վըշտացնեմ մորս իմ այլանդակ, հարբած տեսքով, ես մեքենաբար գնացի Անտոնի յետևից: Մենք անցանք Իզմայիլյան պրոսպեկտը, ապա դեպի տաներորդ բոտան, ուր ապրում եր Անտոնը: Վորովհետև դեռ հարբած էյի, ես վճռեցի մի փոքր հանգստանալ Անտոնի մոտ: Նրա ձեռ մայրը, տեսնելով ինձ, սկսեց գոռալ. «Այդ ի՞նչ հարբը, տեսնելով ինձ, սկսեց գոռալ. «Այդ ի՞նչ հարբեցողները հետ ես դու բարեկամություն անում, ի՞նչպես չես ամաչում, Անտոն»:

Հսելով այդ խոսքերը, վճռեցի հեռանալ, ես հիրավի ամաչում էյի... երեքվելով ու սայթաքվելով, դուրս եկա նախասենյակը: Յես նայելով ես թեքվեցի, ինչպես թվաց ինձ, դեպի աղտոտ վեղրոն: Յես ցավալից սկսեցի սիրաթափել: Հենց այդ միջոցին բացվեց մյուս բնափակարանի դուռը ու երևաց գոգնոցավոր կոշիկալարի պատկերը: Ինչ վոր աղաղակելով, նա անհետացավ: Ես այնպիսի դրության մեջ էյի, վոր վոչինչ չէյի հասկանում: Մի բուռեցի հետո դուրս թռան չորս կոշիկալար, և յես չեմ հիշում թե ի՞նչպես, արդեն բակումս էյի... Իմ շուրջը ինչ վոր գոռում ու աղմկում էյին: Յես վայր էյի ընկնում, բարձրանում, նորից ընկնում... Յես կորցրեցի գիտակցությունս... Յերբ ուշքի

յեկա, պառկած էյի հատակի վրա, ջախջախ-
ված և արյունաթաթախ: Անտոնի մայրը լուռ
սարտասվում էր: Անտոնը ինքը, հրացանի փողը
թափահարելով, պաշտպանվում էր ամբոխից, վոր
գոռում էր ու զեպի պատուհան խուժում: Նա
գոռում էր:

— Հեռացիր, թե չե— կը ջարդեմ:

— Այստեղ բեր այդ լրբին. — լավում էր լուսա-
մուտից. — նա մեր մաքուր ջրի ամանն ապակա-
նեց: Այդ ամանը հիմա պետք է որհնել... Դեհ,
Սաշկա, առաց Անտոնը, տեսնելով, վոր ուշքի յեմ
եկել, պետք է փախչել, գործը վատ ընթացք է
ստանում: Ես հազիվ կարողացա քեզ նրանց
ձեռքերից ազատել, վոտաներից բռնելով ու քա-
շելով... Թե չե նրանք քեզ կըսպանեյին: Թեև
ամբողջ մարմինս ցավում էր ու մորմորվում,
բայց հարբածությունն անցել էր: Անտոնի ոգնու-
թյամբ, վոր պաշտպանվում էր հրացանի փողով
մենք ազատվեցինք կոշիակարներից: Տուն գալով
ես անկողին մտա և հիվանդ պառկած էյի մոտ
երկու ամիս: Դաժան ձեռից հետո, ես մահ-
վան դուռն հասա: Գիտակցությունս արդեն թու-
լանում էր, խոսել չէյի կարողանում և, վորպես
երազ, լսում էյի, թե ինչպես հայրս, հիվանդա-
նոցից վերադառնալով, ասում էր մորս:

— Սաշկան մեռնում է, վոտներն արդեն սա-

ռել են ու հենց վոր սրտին հասնի, անմիջապես
կը մեռնի:

Յես լսեցի, ինչպես նա հեկեկաց, մարդ
ուղարկեց տերտերի յետևից, իսկ մայրս
մտածեց ինձ քաղցր, տաք թեյ խմեցնել: Յես
անտարբեր էյի զեպի այն բոլորը, ինչ վոր
կատարվում էր իմ շուրջը: Ինձ հետաքրքրում
էր միայն այն հարցը, թե ինչպես ես պետք է
այն աշխարհն անցնեյի: Մի քանի կում թեյը,
վոր մայրս, գզալի միջոցով բանալով ուժգին
սեղմված ատամներս, ածեց բերանս, հրաշալի
նեղգործություն ունեցավ: Քաշված ձեռքերս
ու վոտներս ուղղվեցին, ատամներս բացվեցին,
ես խոսելու ընդունակություն ստացա: Բայց
վորովհետև այդ ժամանակ եկավ տերտերը և հա-
ղորդեց ինձ, ես, ինչպես և ինձ բոլոր շրջապա-
տողները, վերագրեցին այդ հրաշագործ լավա-
ցումը հաղորդության ույժին: Յես մահվան շեմ-
քումն էյի և եթե կենդանի մնացի, վերածնվե-
ցի այլ կյանքի համար: Այդ որվանից սկսեցի
հետաքրքրվել կրոնական խնդիրներով: Շրջա-
պատի կյանքն ավելի ու ավելի թվում էր
ինձ անգույն հետաքրությունից զուրկ ու միա-
տեսակ: Յես սկսեցի պատկերացնել մի այլ,
մշտենջանալոր կյանք, երկնքում, գրախտի այ-
զիներում, սրբերի ու նահատակների շրջանում:

Այդ ժամանակ, 1888 թվի աշնանը, վախճանվեց հայրս: Մեռնելիս, ցույց տալով սուրբ պատկերը, նա երգվեցնում էր ինձ հնազանդ լինել իշխանությանը:

Ես կես գնով ծախեցի մեր կովերը, նրանք ծանրություն էյին ինձ համար, և բանվորական անակից փոխադրվեցի քաղաք, Ոբողնայա ջրանցքի ափերը: Դարբին Կուսկովը, Եգոր Յակովլևը (Կուկլին), կաթսաների մոտ աշխատող Սեմյոնովը և Անտոնն ու Նիկոլա Բոգզանովը, ինչպես ես հիմա զգում եմ, 1886—1887 թվականներում կապ ունեյին մի ինչ վոր հեղափոխական կազմակերպության հետ: Կուսովը, ըստ երեկույթին, այդ շրջանի գլուխն էր: Նա աչքի էր ընկնում իր բարեկիրթ սովորություններով, իր հպարտալից վերաբերմունքով, և անսովոր այն ժամանակվա համար մարդու արժանապատվության գիտակցությամբ, վոր նմանեցնում էր նրան Փարիզի բանվորին: Հետաքրքիր ու խելոք լինելով, նա սիրում էր գրքեր կարդալ: Անկախ էր իր գատողություններում, իսկ տերտերներին ու կրոնին վերաբերվում էր բացարձակ արհամարհանքով: Միևնույն ժամանակ նա սիրում էր խմել ու հրապուրվում էր կանանցով: Ես, ակներև, զուր էյի գալիս նրան: Ինձ մոտ նա երբեմն երգում էր,

Վո՛հ, իմ վիշտը, վո՛հ իմ վիշտը,
Պրիստավի ընթրիքին մի ամբողջ դուխան ե պետք:

Պրիստավը գալիս է, ժողովուրդը դիմավորում է նրան:

Պրիստավի համար, գյուղացի, գիշերը աղջկեղ պատրաստիր...

Վո՛հ, իմ վիշտը, վո՛հ իմ վիշտը...

Նա ինձ տուն հրավիրեց, ուր և ծանոթացրեց իր քրոջ, կուրսիստիայի հետ: Այնուհետև ես մտաբերում եմ բանվորական երեկույթի անվան տակ ժողով գումարելու փորձը: Եգոր Յակովլևիչի մոտ հրավիրվածները թվումն էյի և ես: Երբ եկավ ակնոցավոր բարձրահասակ երիտասարդը, Կուսկովը, Յակովլևը, Բոգզանովը, Սիմյոնովը և Անտոնը գնացին մյուս սենյակը: Ինձ առաջին սենյակում թողեցին որիորդի մորը զբաղեցնելու համար: Խզգում էր ջուրով և որիորդները պարում էյին: Ինչո՞ւ համար էր կայանում ժողովը չգիտեյի:

Բարձրահասակ երիտասարդը նույն խորհուրդավորությամբ գնաց, ինչպես վոր եկել էր: Ես նրան ել երբեք չհանդիպեցի: Կուսովը խնդրեց վոչինչ չխոսել վո՛չ կուրսիստիայի, վոչ ինտելիգենտի մասին:

Վորովհետև ես այն ժամանակ դեռ բոլորովին պատրաստ չէյի հեղափոխական գործունեության համար, այդ պատճառով վորոշված էր,

երևի, վոր ինձ համար վաղաժամ ե ժողովներին մասնակցելը: Ինձ թվում ե, վոր այդ մի փորձ եր բանվորների հետ կապ ստեղծելու, վոր զրահան հետևանքներ չտվեց: Սեմյոնով գնաց Վիտեբսկի նահանգը, Բոգդանովը վախճանվեց, Յակովևը միանգամայն արբեցողութեան ավեց իրեն, ընկավ Վլադեմսկի վանքը. միայն Կուսովը մյուսներէից ավելի դիմադրեց տիրող հոսանքին: Նա ինձ մի պատմվածք տվեց կարգալու (հեղինակի ազգանունը մտաբեր ել չեմ կարողանում): Սյնտեղ նկարագրված ե ուսանող երիտասարդութունը, վորը հանդես եր գալիս վորպես բարեմիտ ե հեղափոխական: Հեղինակը գովում ե առաջին գիծը ե աշխատում ե պախարակել երկրորդը: Չնայելով հեղինակի բոլոր ջանքերին, իմ համակրութունը հեղափոխականութեան կողմն եր: Առանձնակի ուժգին տպավորութուն թողեց վրաս Վոլգայի ափերում մի տեսիլ, ուր արտասանվում եր Նեկրասովի «Выд на Волгу» բանաստեղծութունը:

Այդ բանաստեղծութունը տպավորվեց իմ հոգում. նա ինձ հարազատ ու մտերիմ եր թվում: Բայց հանկարծակի արթնացած միաքս անդոր եր ցրելու կրոնական հաշիշը այդ արբեցումի տակն եյի ամբողջովին: Կուսկովը, անշուշտ, նկատեց

այդ: Նա բացասորեն թափահարեց իմ ձեռքը ու բավականացավ միայն նրանով, վոր ասաց.

— Իսկ այդ մարդիկ, Սաշկա, վորոնք ուզում են ազատել ժողովուրդը կալվածատերերից — իրավացի են:

Կրակոտ Կուսկովի կոչը — ապստամբվել մեզ շրջապատող անարդարութեան դեմ, արձագանդ չգտավ այն ժամանակ իմ հոգում, նրա հրդեհող պերճախոսութունը, զայրույթով չվառեց իմ հոգին: Նա մի հսկա կաղնի եր, վորին չեյին կարող տուպալել վոչ փոթորիկը ե վոչ ել մրբիկը: Իսկ ես, վորպես մի թույլ եղեգն, թեքվել եյի այն ժամանակ մինչև գետին ու անձնատուր եյի եղել այն թունոտ շնչին, վորով կրոնը թունավորում եր ամբոխը: Այեքսանդր Մի-ի որով, երբ հեղափոխականների ձայնը խեղդված եր՝ «քարե պարկերում», Սիբիրի ամայի տարածութեան մեջ ու կախաղանների վրա, տերաբները, եպիսկոպոսները, կուսակրոնները ե ուղղափառ — բյուզանդ ամբողջ եկեղեցին, վորի թև ու թիկունքն եր Սինոդի որբ-պրոկուրոր Պորեզանոսցը եռանդուն գործում եր: Տերաբները քարոզում եյին: Կատարվեց Սարովի Սերաֆեմի նշխարհների բացումը. (այժմ միայն իմացվեց, վոր այդ «նշխարհները» հասարակ բամբակի ու կարդոնի կտորներ են): Հայտնվում եյին հրաշա-

գործ սուրբերի պատկերներ ու պատրաստվում էյին հրաշքներ: Կար և մի սուրբ տերտեր—Հովհաննես Կրօնշգատակի անունով:

Նշխարհների, սուրբ պատկերների առաջ և Հովհաննես Կրօնշգատակու մոտ կատարվող հրաշքների մասին բանվորների շրջանում զանազան լուրեր էյին պատվում: Դավանափոխ հրեա, տերտեր Սլյապինը, (կարծեմ Անգլիա հպատակ) ուղղափառություն ունդունած հոգևոր ճեմարանի ուսանող ուղղափառ միսիոներ դարձած՝ կազմակերպել եր «Նոր թուղթ պատրաստող» գործարանին կից «Ժուժկալ ընկերություն»: Այստեղ բանվորների փողով հիմք դրվեց ու կառուցվեց եկեղեցի:

Մի այլ տերտեր, Գրիգորիյ Պետրով, ավելի ուշ, քաղաքային սպանդանոցին կից բանվորների շրջանում հիմնեց ժուժկալների ընկերություն: Այդ այն ժամանակ եր, յերբ Պրեբդոնոսցևը խրատացնում եր եկեղեցական—ծխական ուսումնարանների ցանցը և ուղում եր հարություն տալ նեխվող ու քայքայվող ուղղափառ եկեղեցուն: Պետրով քահանան ավելի հեռուն եր գնամ, նա փորձեց ուղղափառության այդ մեռած հիմունքը հասեմել Լ. Տոլստոյի վարդապետության բացատրություններով: Ստեմյաննի փողոցում նույն-

պես հիմնեցին «Ուղղափառ եկեղեցու փողով քրիստոնեություն տարածելու ընկերություն»:

Պրեբդոնոսցևն իրրև ցարիզմի հավատարիմ զամբո զգում և հասկանում եր, վոր ինքնակալությանը վտանգ ե սպառնում, և նա մտքելիցացիայի յենթարկեց ամբողջ սև բանակը, նըբանց, վորոնց ոուս ժողովուրդը ճիշտ վոր երկարականջ քուռակի ջինս եր անվանում: Այդ երկարականջ տերտերները, սկսեցին հոգիներ վորսալ, քարոզում էյին համբերություն, ժուժկալություն, հնազանդություն, և պատմում, էյին այն պարզեների մասին, վոր բոլոր հավատացյալներին սպասվում ե դրախտում: Ես տարված էյի այդ պղտոր, կեղտոտ հոսանքով:

Փարիզում, փայլուն ու լուսավորված բուլվարներում, ուր ամբողջ աշխարհի բուրժուազիան վատնում ե հավելյալ արժեքը զգում ե, վոր այստեղ մարդն ավելի ինքնագոհ ե:

Սակայն այդ լիություն ասվածը մեզանում չեր կարող լինել: Ֆրանսիացի ու Բելգիացի բանվորները, վորոնք պատահամբ զալիս էյին ոուս քաղաքական եմիգրանտների յերեկոյթներին, ոուս ժողովրդական երգերի թախձալից եղանակներով ապշած՝ ասում էյին— «Այդպիսի յեղանակները մեզանում մենք լսում ենք միայն եկեղեցիներում»: Դեռ ավելին

նկատելի էր, վոր փարիզի բուլվարները ինքնագոհ և կուշտ բուրժուաններն իրենց հողեբանությամբ նման են վայրենի մարդակերներին, վորոնք ցիլինդր են դնում գլխներին ու ուլայած շապիկներ հագնում: Սալտիկով — Շչեդրին ասում է, վոր կուշտ և հղիացած մարդը նմանվում խոզի, միայն անհուն տրամությունը մարդուն դարձնում է ավելի մարդկային, ավելի է կարեկից դեպի պի ուրիշի վիշտն ու տանջանքը:

Փարիզի բուլվարները ուրախ, անհոգ երգերը քնեցնում են մարդուն: Նեկրասովի, և ուրև ժողովրդական երգերի տխուր, թախծալից մեղեդին տխուր արամադրություն են առաջ բերում: Նրանք գերում են սիրտն ու սթափեցնում քնած միտքը: — «Մանկության վոսկի որերում, բոլոր կենդանիները բախտավոր են սպրում: Առանց աշխատելու, հրճվող մանկությունից զվարճության և ուրախության տուրքն են առնում», ասում է Նեկրասովը: Այդ բախտավոր մանկությունն ինձ չը վիճակվեց տեսնելու: Ամեն որ ֆիզիքական աշխատանքներ էյի կատարում բթանալու չափ:

Ընկնելով ճախարագործ մեծ արհեստանոցը, երես առ երես հանդիպելով ամենաանամսի, անխնա շահագործման, գնահատումների մշտական պակասեցման, վոչ մի համակրություն չը

տեսնելով այսպես կոչված լավ բանվորների կողմից, վորոնց համար նշանակություն չունեք գնահատման պակասացումը, ես ինձ դժբախտ էյի զգում: Այն կյանքը, վոր յես վարում էյի, սկսեց թվալ ինձ միատեսակ, նույնիսկ ձանձրալի: որերը միանման էյին՝ կյանքն այլևս բավարարություն չեք տալիս: Ես ինձ զգում էյի վանդակի մեջ փակված թռչունի նման: Կյանքը բանտ եր թվում: Հոգուս մեջ առաջ եկան անորոշ ցանկություններ — ազատության, ազատողի պահանջ:

Ահա այդ ժամանակ ես մի ձայն լսեցի, վորը ազատություն ու փրկություն եր խոստանում: Այդ բարեկամի, ընկերոջ ձայնը չեք, վոր կարող եր ոգնել ճնշված բանվորին — դուրս բերել կասկածների ցանցից դեպի լայն ուղին: Դա ոձի ձայնն եր, վորը նախ քան լափելը կախարդում եր իր զոհին, այդ Հուդայի — տերտերի ձայն եր. «Յեկեք մոտս, ամենքդ աշխատավորներ ու կարիքավորներ, և ես կը սփոփեմ ձեզ». լսեցի յես ու գնացի: Ինձ շոյում եր ժուժկալ ընկերության դադափարը, վոր արծարծում էյին Սլյայլին և Պետրով տերտերները: Անմիաբանությունը բանվորների շրջանում այնչափ մեծ եր, դիշերն այնպես խավար, վոր տերտերների հասարակությունն ել այդ խավար գիշերին թվում

եր մի լույսի ճառագայթ: Միայն ազիտացիայի ու պրոպոզանդայի կատրյալ բացակայութեամբ գործարաններում, երբ չըկային վոչ կուսակցութեւններ, վոչ մյութեւններ, վոչ կոտակերատիվ, փոխողութեան կասսաներ, ես կարող եմ բացատրել ինձ այն հրապույրը, վոր տերտերները թագաւորի, կալվածատիրոջ ու կապիտալիստի, հաճույքի համար պատրաստում էին բանվորերի համար: Պրոլետարական բնագոյր բանվորներին զեպի անշատումը չեր տանում, այլ մերձեցումն եր պահանջում:

Հասարակութեան անդամ դառնալով, ես բանվորների շրջանում սկսեցի անդամներ ժողովել: Հրատարակելով այդ գաղափարով, ես երեւակայում էի ինձ, վոր հնարավոր ե հարուստների ու ազգասների, հին, քրիստոնեական իդյալների իրագործումը: Բանվորների հին սերունդը բավական անտարբեր վերաբերվեց ժուժկալ ընկերութեան նոր գաղափարին, բայց երիտասարդ բանվորութեան շարքերում ես շատ շուտ կողմնակիցներ գտա:

Կոստլորով, Կուլպցով, Դրուժկին, Անդրեյև և Եկատրին խմբակցութեւն կազմեցին ու անդամագրվեցին այդ ընկերութեանը: Ի նկատի ունենալով, վոր ժուժկալ ընկերութեւնը Սլյապին տերտերը հիմնել եր Բորովյա փողոցում, նոր

թուղթ պատրաստող գործարանի մոտ, բանվորների հին սերունդն ինձ ծաղրելով կանչում եր «Բորովոյ»: Բայց գործի եռութեամբ ես և իմ ընկերները յենթարկվել էինք ուղղափառ եկեղեցու ապականիչ ազդեցութեանը, վոր քարոզում եր անմիտ հնագանդութեւն իշխանութեանը, և հին, բյուզանդիկ հրաժարումն աշխարհական վայելքներից:

Գայթագոված տերտերներից, ես և իմ ընկերներն ամբողջ ազատ ժամանակը գործադրում էինք ժամասացութեան, սուրբ գիրքը ու սրբերի կյանքը կարգալու համար:

Մենք խստորեն պահում էինք պատերը իսկ մեր բոլոր փողերը—կոպեկները, վոր կարող էինք խնայել, տալիս էինք եկեղեցիներին ու սուրբերի պատկերներին: Շաբաթ ուր մենք գնում էինք «Նովո-Աֆանասեակայա» յեկեղեցին. ուր երեկոյան ժամերգութեւնը ժամը վեցից տեում եր մինչև կես գիշեր: Կիրակի, ժամիչորսից մենք վեր էինք կենում, առավոտվա ժամասութեւնը լսելու համար:

Մութն եր: Փայլում էին աստղերը: Սառած ձյունը ճոճում եր մեր վոտների տակ: Սառած ոգում մարում էին զանգի դողանջները:

Ստվերների, նման սահում էին փոքրաթիվ աստվածապաշտները, վորոնք չքաւոր դա-

ասկարզիցն եյին: Առավոտվա ժամասացությունը վերջանալուց հետո, առավոտյան ժամը վեցին, զնում եյինք վաղ պատարագը լսելու, իսկ առավոտվա ժամի տասին անցնում եյինք ուշ պատարագին: Ժամի չորսին, կես որից հետո մենք զնում եյինք երեկոյեան ժամերգությանը, իսկ այնուհետև տերաբերները սկսում եյին իրենց զրույցը: Բացի այդ, ժուժկալ ընկերության անդամների հետ մենք վոտով 20—30 վերստ ուխտագնացություն եյինք կատարում գետի Կուլպինո և Սերգևսկի վանքերը:

Մեր արհեստանոցում ամենալավ բանվորներ համարվում եյին մեքենավար Նիկոլաևը ու ու ճախարագործ Սիգրոսկինը: Նրանց երկուսին էլ բանվորները անվանում եյին «կուլ տվողներ» վորովհետև անչափ սիրում եյին, երբ իրենց հրավիրում եյին կոնծելու: Սյնալիսի հասարակ բան, վորպիսին է ստամնավոր անիվների հաշվիվ պտուտակներ պատրաստելու համար, բոլորին հայտնի չեր: Երիտասարդ ճախարագործները դժվարանում եյին այդ հաշվում, և զիմում եյին Նիկոլայեկին ու Սիգրոսկինին: Բայց այդ ծառայության համար պետք էր դարե՛ջրատուն հրավիրել ու հյուրասիրել: Այդ հաշվի արագ լուծելու արվեստը նրանք խանդոտի նման թագուն եյին պահում և ուրիշներին չեյին հաղորդում: Նրանք

երկուս էլ հետաքրքրվեցին իմ ազիտացիայով, եկան իմ մեքենայի մոտ ու ծանոթանալով իմ ասածներին խորհուրդ տվեցին.— Թող «Բորովոյ» մի քարոզիր, հիմարություններ դուրս մի տա: Կյանքից սկսեցիր, բայց կարող ես մահվանից վերջացնել: Այժմ խոսում ես աստծո մասին, իսկ հետո, տես, սոցիալիստ կը դառնաս»:

— Ի՞նչպես թե սոցիալիստ, հարցրի յես:

— Շատ հասկանալի կերպով, շարունակեց Նիկոլայեկը, հավասարակշռված, հանգիստ տոնով, այ, դու սկսեցիր զրքեր կարգալ և հիմա հրապուրվում ես ընթերցանությամբ... Ավելի լավ է թող, եթե վո՛չ կը բանտարկեն ու կախաղան կը բարձրացնեն...

Ես իսկապես, սկսեցի կարգալ սուրբ զըրքերը— աստվածաշունչը, սրբերի կյանքը, Եփրեմի, Սիրենի, Հովհան-Բողասլավի գործերը: Նրանց հետ ծանոթանալն ինձ պետք էր, վոր կարողանայի պատասխանել այն խարդախ հարցերին, վոր ինձ տալիս եյին սնանավատ աղանդավորները ու շտունդրիսանները: Եկեզեցական զրվածքների հետ ծանոթությունս ինձ կատարյալ տիրացու էր դարձրել: Ես անգիր գիտեյի բնագրերը: Աղանդավորները չեյին կարողանում ինձ պատասխանել ու հեռանում եյին: Իմ մեքենայի շուրջը խմբվող ունկնդիրների թիվն ավելանում

եր: Ժուժկալ ընկերության անդամագրվել ցանկացողներին թիվը շարունակ աճում էր: Բայց ես ինքս վերածնվում էյի, բանվորներից մի քանիսը սկսեցին ինձ հարցեր տալ. — Գնդանձե ե աշխարհը, թե տափակ, կանգնած ե նա միշտ մի տեղում, թե՞ շարժվում ե արեգակի շուրջը: Ի՞նչուր չե կաթոլիկ եկեղեցին արգելել հասարակ մահկանացիներին սուրբ գիրք կարդալը: Աստվածաշնչի պատմությունները, և այսպես կոչված սրբերի կյանքն առհասարակ լի յեն այնպիսի հակասություններով, վոր քիչ թե շատ ուշադիր ընթերցողը տեսնում ե, վոր այդ պատմվածքներում թագնված ե անագին, սարսափելի խաբեբայություն: Ամեն անգամ, երբ կարդում էյի սուրբ գիրքը, յես մտաբերում էյի հորս խոսքը, վոր անմիտ ուսանողները, նիգիլիստները, կամ սոցիալիստները չեն հավատում աստծուն: Բայց վորչափ վոր շատ էյի կարդում սուրբ գիրքը, աստրծու գոյության կասկածն ավելի եր զարթնում իմ հոգում: Ինձ թվում էր, վոր ինձ փորձում ե սատանան, ինչպես մենակյացին Նեղոսի ափերում: Յես աշխատում էյի առանձնանալ, հեռանալ ամբոխից: Առաջին առանձնակի ուժգին կասկածները աստրծու գոյության խնդրում ես զգացի այն տոնի օրը, վոր կատարում էր Աղեքսանդր III-ը ֆրանսիացի նավա-

տինների գալու առիթով ռուս-ֆրանսիական դաշնակցության տարեգարձին: Ժողովրդի զարգարված խմբերը գնում էյին Պետերգոֆ: Գուցե այդ շտապող ամբոխի տեսքը, և մարսելյովի սթափեցնող ու կոչող հնչյունները, վորի նվագումը թույլատրված էր, և վորը յես առաջին անգամ էյի լսում, հրամայելից հարցնում էյին ինձ. — «արդյոք, կա աստված»: Այդ մտքերով տարված, ես հեռացա ամբոխից դեպի Նեա գետը, դեպի ծովափ և դիտելով ջրի անեզր տարածությունը, ախանջ գնելով, թե ինչպես են փոթորկում ալիքները, ես հարց էյի տալիս ինձ. — «արդյոք, իսկապես, ես աստված»: Յեվ զարհուրելի միտքը, վոր աստված չըկա, վոր մենք, աղքատ բանվորներս տերտերների քարոզների պատճառով զոհ ենք դառնում մի այդպիսի մեծ և հանգուգն խաբեբայության, ավելի ու ավելի տիրում էյին ինձ:

Վաղ առավոտվանից մինչև ժամի 7 Պետերբուրգի ծայրամասերում բարձր հնչում էյին գործարանների աշխատանքի կանչող գուգովները: Բոլորից բարձր ու լսելի էր Պուտիլովսկի գործարանի համբարուն (сирена): Սուրոցների համաձայն, յես, վորպես լարված մեքենա, գնում էյի աշխատանքի: Ես հիվանդ էյի, հոգնած, ջղերս լարված էյին: Արհեստանոցին

մտտենալիս, — ուր մեքենաները շառաչում էյին, — ես արդեն հոգածությունն էյի զգում, ծանր աշխատանքը, ժամասացություններին երկար կանգները, պասը — այդ բոլորը հոգնեցնում էյին ինձ: Հակառակ իմ կամքի, ես սկսում էյի ատել և՛ գործարանը, և՛ արհեստանոցը, և՛ վարպետ Ներեյին: Ազիտացիայով զբաղված, ես քիչ էյի հետաքրքրվում այն աշխատանքներով, վորոնք նա տալիս էր ինձ կատարելու համար: Այդ Ներեյը Շվեյցարացի էր, վորպես շվեյցարական բանվոր, նա Ռուսաստանն էր եկել բախտ վորոնելու: Ռուս վարպետներից նա տարբերվում էր նրանով, վոր կաշառք չէր վերցնում: Բայց կապիտալի յենթասպայի արհեստը, վոր պարփակում է իր մեջ և՛ կազմակերպչական, և՛ վոստիկանի պարտավորությունները, հրամայական ստիպում էր հենց իրեն, բացի ունեն, շարունակ իջեցնել գնահատումները:

Ինձ երևի, նա կամ տարորինակ, կամ հիմար էր համարում: Նա առաջարկում էր ինձ լավ վաստակ, այն պայմանով, վոր ես գեկուցում տայի նրան արհեստանոցում կատարվող գեպքերի մասին: Մի ինչ վոր գաղանի ձայնն էր կանգնեցնում ինձ այդ ստոր գերից, չնայած վոր, այդ գործը ձեռք ձգելու շատ ցանկացողներ կային: Այդ պատճառով, երևի նա վրեժ էր առ-

նում, և շատ անգամ իջեցնում էր մեր աշխատավարձը, վորովհետև ես, ինչպես ասում էյին բանվորները, քարոզում էյի ու շատ անգամ բավարարությամբ չէյի կատարում ինձ հանձնված աշխատանքը:

Կապիտալիստական հասարակարգում բանվորին ուր ու գիշեր ընկճում ու հալածում է մի միտք — վոր կարող է ինքն առանց աշխատանքի մնալ: Վարպետ Ներեյը միշտ կարող էր ինձ դուրս անել, «չսլքտել», ինչպես ասում էյին բանվորները, «սալահատակները տաշելու» համար: Իսկ ինձ մտ էյին մայրս, քույրս և երկու յեղբայրներս, վորոնք ապրում էյին իմ վաստակով: Այն ժամանակ ես որական ստանում էյի մի ուրբի՝ Վարպետից, վորից ես կախում ունեյի, միշտ նկատողություններ էր անում, և սպառնում էր իջեցնել աշխատավարձս. ես սկսեցի սաստիկ վախենալ: Թե վորչափ մեծ էր այդ երկյուղը, երեվում է նրանից, վոր տասը տարուց հետո, երբ ես արդեն Պետերբուրգից հեռացել էյի և վարպետի ուր լինեին անգամ չըզիտեյի, նրա ավարպետի ուր լինեին անգամ չըզիտեյի, հարկու պատկերը յերագում էլ տեսնելիս, ցնցվում, քրտանակոխ էյի լինում:

Բոլոր հետևանքն այն եղավ, վոր յես ատեցի թե այդ վարպետին, և թե գործարանը, մի ինչ վոր գաղանի, բիրտ կըքով, վոր վոչ չափ ունեք, վոչ՝

առհման: Ինձ առավելապես տանջում եր զնահատուններն մշտական պահասեցումը: Վորպես քրիստոսի վարդապետության կողմնակից չարիքին չպետք է հակառակելի, յես պետք է հոժարակամ ենթարկվելի նրան:

Բայց զիտակցելով, վոր բողոքի բացակայությունը, առաջ է բերում այն, վոր այդ պատճառով վատթարանում է հարյուրավոր ու հազարավոր բանվորների դրությունը, ստիպվեցի հանգել այն սարսափելի մտքին, վոր վոչ թե Քրիստոսի ու Տոյստոյի քարոզած չարիքին չը դիմադրելը, այլ միայն չարիքի դեմ կռիվը կարող է բարվոքել բանվորի դրությունը: Յեզ ես շատ վատ եմ անում, վոր խոնարհվում եմ վարպետի քմահաճույքների առաջ, ինչպես եղեզը՝ քամու առաջ: Յես պետք է բարձրացնեմ գլուխս, ուղղեմ կռացած մեջքս, պետք է ամուր ու հաստատ լինեմ,— մտածում էյի յես,— ինչպես վոր կազնին չի թեքվում քամու առաջ:

Քրիստոսի ամբողջ վարպետությունը, և ամեն մի կրոն ուղղափառ, կաթողիկ, թե հրեյական, վորոնք հնազանդություն և չարիքին չը դիմադրել են քարոզում, բանվոր դասակարգի համար պատրաստված մի մեծ խաբեբայություն են և ուրիշ վոչինչ:

Բայց ես մեքենայաբար դեռես շարունա-

կում էյի շրջել եկեղեցիները, ժողովել ամբողջ ու «քարոզել»: Յես զուենատվում ու նիհարանում եի: Տեսնելով, վոր ես ուշադիր չեմ դեպի իմ աշխատանքը, և ազիտացիա եմ մղում, վարպետ ներեյն ավելի հաճախ եր շարժում իր գլուխը... Տարեց տարի իմ անցադրերը ստանում եի վոստիկանության միջոցով: Հորս ազգանունը Շեպո-վալով եր: Ուկրայինայի գրագիրը սկսեց ինձ Շապովալով, կամ Շապովալով գրել: Ազգանվան թյուրիմացության պատճառով, կամ գուցե այն պատճառով, վոր իմ ազիտացյան սկսում եր կասկածներ հարուցանել վոստիկանության առաջ, ինձ ամեն տարի, իսկ երբեմն տարին մի յերկու անգամ, պրիստավի գրասենյակն էյին կանչում: Մի որ ինձ կանչեցին երկաթուղու ժանդարմների բոսմիստրի մոտ, վորի միջոցով, անհայտ պատճառներով պահանջվում եր, վոր ես ուղարկելի խնդիրս ինձ նոր անցազիր ուղարկելու մասին: Անցազրերն ուղարկվում էյին մի տարի, կամ վեց ամիս ժամանակամիջոցով:

Վոստիկանատանը բանվորների ու առհասարակ վատ հագնվածների հետ շատ կոպիտ էյին վարվում. պրիստավի ընդունարանում գեռ,— ուր պետք եր ժամերով սպասել,— աչքի եր ընկնում այցելուների հետ վոչ հավասար վարվեցողությունը: Լավ հագնված պարոնների մոտով

վոստիկան չինովնիկները կրունկները վրա եյին անց ու դարձ անուամ, աթոռ առաջարկում ու դուք-ով խոսում: Բանվորին ասում եյին «դու», գոռում եյին, վտար գետին դարկում, սպառնում եյին բանտով և այլն: «Մառնարանից», (հախքան բանտարկություն մի խոնավ սենյակ) գրեթե միշտ ազագակներ եյին լսվում: Այդ հերթապահ գործովոյն եր, վոր դերժիմորդա բռունցքներ եր հասցնում...

Ես միշտ գողում եյի, մտածելով, վոր կարող եյի հարբածները, գողերը ու անառակ կանանց հետ այդ սենյակն ընկնել: Պրիստավի մոտով անցնելիս միշտ սարսափում եյի իշխանությունից: Գուցե այն պատճառով, վոր ես վատ եյի հագնված և հնազանդ ու ընկճված տեսք ունեյի: Պրիստավը միշտ գոռում եր վրաս և հայհոյում անխնա, ամենասանվայել կերպով:

Այդպիսի բիրտ վիրավորական վերաբերմունքի պատճառով, վորը կրկնվում եր տարեց տարի, յես կորցրեցի դեպի իշխանությունը ունեցած պատկառանքս. գործովոյներին, թաղապետներին և պրիստավներին տեմնելիս, իմ մեջ ակամայից առաջ եր գալիս խոր ատելություն: Նույնպիսի վրդովեցուցիչ վերաբերմունք ստիպված եի տանել և ժանդարմի բոտմիստրի կողմից:

— Ասա, ինչպես ես կոչվում.— ասաց հա խիստ:

— Շապովալ, Ալեքսանդր Իսիդորովիչ, — պատասխանեցի ես:

— Վոչ թե Իսիդորովիչ, այլ ուղղակի Սիդորով, դու հո ազնվական չես, այլ մոլոժիկ, ավանակ դո՛ւ, ես քո մերը, քո մերը... գոռում եր ժանդարմը:

— Հիմար, ինչպես ես կանգնել իշխանության առաջ, ձեռքերդ ուղիղ պահիր, ես քո մերը... քո մերը...

— Ի՞նչու եմ քեզ անցադիր ուղարկում կամ Շապովալովի անունով, կամ Շապովալ, և կամ Շապուովալ:

— Ձը գիտեմ, պարոն ոֆիցեր, պատասխանեցի ես:

— Ինչպես ես խոսում, իշխանության հետ խոսել չը գիտես, լիբբ:

— Նիկիֆորով, գոռում եր ոֆիցերը, ցույց տուր այդ հիմարին, թե ինչպես պետք է խոսել և կանգնել իշխանության առաջ. դրա համար մի պահանջագիր գրիր անցադրի մասին:

— Լսում եմ, ձերդ բարձր արժանապատվություն, ասում եր Նիկիֆորովը, շարունակը զընդացնելով ու լարել պես ձգվելով իր մեծավորի առաջ: Վորովհետև վոստիկան պրիստավ-

ները, ոգնականներն ու ժանդարմի սպաները ծագումով ազնվականներ էյին, վորոնք արդեն վատնել էյին իրանց կարողությունը, նրանք բացի ժողովուրդը խիստ պահելու մասին եղած ընդհանուր հրահանգից, իրենք ել աշխատում էյին հայրական խրատների իմաստով, և այդ բոլոր խրատներին կցում էյին ազգային անցեգուր հայհոյանքները:

Այդ բիրտ-վիրավորական վերաբերմունքի պատճառով, ես ժանդարմներին ել դասեցի այն փառավորների շարքը, ուր բանվորները Պիտերում գասում էյին բոլոր վոստիկաններին:

Թե ի՞նչու եր վոստիկանության համար վիրավորական եզրույթով թագավորի կոչումը, չը գիտեմ: Բայց մի որ, երբ ես մի գործողովոյի փառավորն անվանեցի, նա գուռաց. «Սպասիր, այ արձանագրություն կը կաղմեմ, այն ժամանակ կիմանաս թե ի՞նչ ե նշանակում անսխալել վոստիկանին»:

ՅԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՅ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ճախարագործ մեքենայի աշխատանքը պահանջում ե մեծ ինտելիգենտություն, մակարդակների տեխնիկական հասկացողություն ու թվարանական գիտելիքներ:

Հարկավոր եր նույնպես երկրաչափության, հանրահաշիվի և եռանկյունաչափության հետ մի փոքր ծանոթ լինել: Այդ բոլորն անհրաժեշտ են կոնաձև մարմինները սրելու և պտուտակներ պատրաստելու համար: Այդ գիտելիքներն ստանալու անորոշ հույսով, և դպրոցում աստծու գոյության խնդիրը պարզելու համար, ես սկսեցի հաճախել Տեխնիկական Հնկերության երեկոյան դասընթացները, վոր գտնվում եր Պետերգոֆի պրոսպեկտում:

Հեղափոխական — ինտելիգենտները մըտնում էյին այն ժամանակ Պետերբուրգի կիրակնօրյա ու յերեկոյան դասընթացները վորպես ուսուցիչներ, վոր ավելի հեշտ ծանոթանան բանվորների հետ և վորպեսզի ծանոթացեն ու հրապուրեն նրանց դեպի հեղափոխական գործունեությունը: Ինչպես հայտնի ե, 1881 թվին կախաղան բարձրացած Սոֆիա Պերովսկայան ել ուսուցչուհի եր Նևսկի գաստավի այն կողմը գտնված այգախի դպրոցներից մեկում: Հետագայում, գործարանային նույն ծայրամասում կոմունիստ կին Նադեժդա Կոնստանտինովնա կրուպսկայան (Ուլիանովա) 1890 թվականներին աշխատում եր այգախի դպրոցներից մեկում:

Գուցե այն պատճառով, վոր այդ թաղամասը, ուր գտնվում եր այդ երեկոյան դպրոցը, ուր

ես սովորում եյի, այնչափ հայտնի չեք, վորպես հռչակավոր Շլիսսեյլուրգի մեծ ճանապարհը, կամ գուցե մի այլ պատճառով, այդ դպրոցում եղած երեք տարվա ընթացքում ես վոչ միայն չը հանդիպեցի ուսուցչական կազմի շրջանում հեղափոխական շարժման համակրողներին, այլ և ընդհարվում եյի միշտ այն ուսուցիչներին հետ, վորոնք դասերի ժամանակ այն միտքն եյին արժարծուծ, վոր Թուսաստանում արդյունաբերութիւնը զարգացնելու համար պետք են և բանվորական երկար օր, և ցածր աշխատավարձ:

Այն, ինչ վոր սովորել եյի քաղաքի սկզբնական ստորին ուսումնարանում, գրեթե մոռացել եյի. այդ պատճառով ել ես սկսեցի յերկրորդ դասարանից: Վորպես գիտութիւնները տաճար մտա յես այդ համեստ ուսումնարանը: Ես վերաբերում եյի նրան վորպես գիտելիքների ազդուրի: Ուսուցիչները մի ինչ վոր առանձնակի, բարձր աշխարհի մարդիկ եյին թվում ինձ: Վոչ հասարակ հարգանքով, այլ գրեթե պատկառանքով եյի դալիս դասերին և այնպես ել վերաբերվում:

Ինձանից հետո 1892 թվին, ուսումնարան մտան և իմ ընկերները - Ալեքսանդր Կոստրոբովը, Վասիլի Կուպցովը, Իվան Իրոժիկինը, Պավել Մադրեկը և ուրիշները, վորոնց ազգանուններն արդեն չեմ հիշում:

1891 թվականից սկսած, ինձ վրա կողմնակի մեծ ազդեցութիւն ունեցավ Կոժենիկովը և ուղղակի—ճախարագործ Դմիտրի Ֆյոդորովիչ Ֆյոդորովը: Առաջինը, բոլոր տվեալներով, կապված եր մի վորեւ շրջանի հետ:

Սիզրոսիկինն ու Նիկոլայեը մի քանի անգամ ցույց են տվել ինձ նրան: Այ, «Բորովոյ», դու քարոզում ես, թե «ողի չը խմենք», գնացեք ժուժկախները ընկերութիւնը, այցելեցեք եկեղեցիները... բայց ահա Կոժենիկովը, նա յերեք եկեղեցի չի գնում, երբ սուրբերի պատկերները մոտով անցնում ե, գլխարկը չի հանում, երեսը չի խաչալինքում: Պաս օրերին կալբաս ե խժոժում, կարագ ու հաց: Անաստված ե նա և անպայման սոցիալիստ»:

Այդ Կոժենիկովը վորպես թե ցույց եր տալիս իր ազատամտութիւնը: Չը նայելով վոր ես փորձում եյի խոսեցնել նրան, բայց նա չեր խոսում: Ըստ երևույթին, նա կապ ուներ հեղափոխական բանվորական մի շրջանի հետ, վոր միայն ինքնակրթութեամբ, թեորիայի ուսումնասիրութեամբ զբաղվելով, բավականանում եյին երեսնց նեղ շրջանի սահմաններով և դեպի մասսաներն անցնելու փորձը չեյին անում: Ես անձամբ գուցե, թվում եյի նրան կրոնի ճիւղաններում կորած մի անհույս մոլեռանդ: Կոժենիկովը

լավ բանվոր եր, գիտեր իր գործը: Նա հագնվում էր երոպական տարազով ու արտաքինով պատկանում էր բանվորական արխատուհրատիային:

Ամեն անգամ, երբ անցնում էյի նրա մտախից, ես մտածում էյի, վոր կան աշխարհում աշնպիսի մարդիկ, վորպեսին ե կոժենիկովը, վորոնք համարձակվում են չընդունել աստուգոյությունը: Յեւ ամեն անգամ, իմ հոգու խորքերը, վորդի նման կրծում եր մի միտք՝ իսկապես նա գոյություն ունի թե վոչ: Ավելի վորոշ պատասխան իմ կասկածներին ավեց Ֆյոդորովը:

Մեքենավար Նիկոլայը և ճախարագործ Սիգրոսկինը իրենց «Շեպելեվներ» հայրենակցական միջության զլուխ եյին անցել: Շեպելեվին ինչ վոր կալվածատեր-գործարանատեր եր, վորի բանվորները դեռ ճորտականներ եյին Նիկոլայ Լ-ի ժամանակ Նիժգորոդի նահանգում: Այդ «Շեպելեվիցիները» կազմում եյին կարծես թե արտոնված բանվորների դասակարգ, վորոնց հատկությունն անցնում եր սերնդից սերունդ, իսկ բանվորների մյուս մասաների վրա հակված եյին նայելու վորպես զրսից ներս խուժած մուժիկներին, վորոնք լավ չը գիտեյին արհեստը ու չէյին պահպանում բանվորական հին պատգամները: Նրանք խանդավից պաշտպանում եյին «մաղարիչ» ստանալու սովորությունը: Ֆյոդորովը կարա-

կանապես հրաժարվեց հետեվելու այդ հին սովորությանը և Սիգրոսկինը վազեվազ եկավ ինձ մոտ գանդատվելու:

— Տես Բորովոյ, մի նոր երկարամազ շան վորդի ե յեկել: Անաստված ե, յեկեղեցի չի գնում, երեսը չի լսաչակնքում, և պասին ել ուտիս որվա բաներ ե լափում:

— Դուք այդ վորտեղից գիտեք. նկատեցի յես, չե՞ վոր նա նոր ե ընդունվել, դուք ուղղակի վատ եք տրամադրված, և այդ այն պատճառով յերեվի, վոր նա ձեզ հարբեցողներիդ, «մաղարիչ» չի ավել:

— Ձե՞ վոր դու ժուժկայների ընկերության անդամ ես: — Բայց ահա հենց մեր «Շեպելեվիցիները» ասում են, վոր Պուտիլովի գործարանում նա հայտնի եր վորպես անաստված: Տես նրա մազերը, բաշը, իսկական ուսանողական ե:

Ֆյոդորովը իսկապես, երկար մազեր ուներ, փափուկ ծղոտե գլխարկ եր ծածկում, և իր արտաքինով շատ նման եր նիդիլխատի: Ես սկսեցի ուշադրություն դարձնել նրան և մոտ ծանոթացա կոժենիկովի բանտարկությունից հետո:

Ամառվա մի որ, բոլորովին անուպասելի, արհեստանոց մտավ ժանդարմի գնդապետը, երեք հակա յենթասպաների հետ: Դիտելով, թե ի՞նչպես բոլորը նրանց ճանապարհ եյին տալիս,

ինչպես Նիկոլայիը և Սիգրոսկին քծնելով գլխարկներն եյին հանում նրանց առաջ ու բարևում, ես առաջին անգամ հասկացա, վոր այդ եկողներն այն մարդիկ են, վորոնք ռուսաստանում մեծ իշխանություն ու մեծ նշանակություն ունեն: Ես տեսնում եյի, թե ինչպես նրանք քրքրում եյին այն արկղը, ուր փակված եյին Կոժենիկովի դործիքները: Մտաբերելով, ինչպես մոտ որերում մի այլ ժանդարմական սպա կշտամբում եր ինձ, և չը նայելով, վոր ես չեյի սիրում Կոժենիկովին, վորպես անասավածի ու վորպես մի մարդու, վոր հպարտ եր և խուսափում եր ինձնից, բայց համակրեցի նրան ու ծնվեց իմ հոգում մի խոր զաղտնի ատելություն գեպի ժանդարմները: Կոժենիկովին մի ամսից հետո արձակեցին և ուղարկեցին Ռիբենսկ վոտսիկանության հսկողության տակ պահելու համար:

Փյոգորովն իսկական ինքնակիրթ մարդ եր: Նա վոչ հեղափոխական եր, վոչ վոզևորվոզ, և վոչ էլ մտածող ու մոլեռանդ զաղափարական: Նա հանգիստ, ստունալից և սկեպտիկ խառնվածքի տեր մարդ եր: Ինքնաբերաբար ամենածայրահեղ քեակցիոն, պահպանողական լրագիրներ կարգալով, վորպես իշխան Մեշչերսկու «Гражданин» և ուղղափառություն ընդունած Ոկրեյցի «Луч»-ը, հեռաքրքրվելով այն զրոյներով, վորոնց հայհո-

յում եյին այդ լրագիրները, նա ծանոթացավ մեր քննադատ և գեղարվեստական գրականության հետ: Ինքնակալությանը և տերտերներին միայնգամայն բացասորեն վերաբերվելով, նա չանցավ հեղափոխության կողմը: Ավելի ուշ, 1905 թվին, հարեց մենշևիկյան կուսակցությանը: Գրքեր կարգալով և գիտությունների հետ ծանոթանալով, նա մեզ զարմացնում եր գիտությամբ: Բայց երբեք չեր հափշտակվում և երբեք չբանտարկվեց: Մարտովը, արտասահմանում դասախոսություններ կարգալով Լոնդոնի համազումարի մասին, և ընդգծելով, վոր առաջադեմ բանվորների մեծամասնությունը գործնականում գնաց բողջեվիկների յետևից, աշխատում եր ապացուցել, վոր Պետերբուրգում ամենալուսավորված բանվորները, և վոչ տղաները, հավատարիմ եյին մնում մենշևիկներին: Շատ հավանական ե, վոր այնպիսի խառնվածքով բանվորները, ինչպես Փյոգորովը՝ վորոնք հանգիստ կարգում եյին, ակտիվ չըմիջամտելով հեղափոխական շարժմանը. վորոնք չեյին բանտարկվում՝ մենշևիկ կազմակերպության կորիզն եյին: Բայց նրանք չափազանց սառնասիրտ եյին, չափազանց զգույշ և այդ պատճառով ազդեցությամբ մրցել բանվոր երիտասարդության հետ, վոր միշտ բողջեվիկների կողմն էր, չեյին կարող:

Ֆյոդորովը մասամբ նույնիսկ բանաստեղծ եր: Նա գիտեր Նեկրասովի, Նադսոնի, Ոմոլ-լեվսկու շատ բանաստեղծութիւնները: Նա ինքը ևս բանաստեղծութիւններ եր գրում, ուր ծաղ-րում եր նրանց, վորոնք «Սոկրատին թույն էյին տվել, Քրիստոսին խաչել, կամ կուրացրել Գալի-լեյին»:

Ես չեյի կարող այլ ևս դիմադրել «սատա-նայի փորձութիւններին», ինչպես վոր ես այդ մտածում էյի. այն ժամանակ ավելի հաճախ էյի գալիս այդ մագոս անաստվածի մեքենայի մօտ, լսում նրա պառմութիւններն ու յերգերը, վոր նա կիսաձայն եղանակում եր, մինչ մեքե-նան գործում եր ինքն իրեն: Նրա ճառերից ու յերգերից բուրում եր ինչ վոր նոր բան, տարո-րինակ, գեղեցիկ, հմայիչ ու սիրտ ճմլեցնող: Ստենկա—Ռյազինի պարթև պատկերը, վորն ընկճված ժողովրդի համար իր գլուխը տվեց դահճի սրին. բանաստեղծ Նադսոնի հավատը, վոր «սուրբ սերը կը վերագառնա աշխարհ», Նեկ-րասովի մուգայի «վշտալից և կատաղի» մրմունջ-ները—բոլորը արձագանք էյին գտնում իմ հո-գում: Ծագում եր մի նոր արև, վորի ճաճանչ-ներում հին աստվածը, իր բոլոր սրբերով ու սատանաներով, դժոխքով ու արքայութիւնով ավելի ու ավելի յետ եր մղվում: Աստվածն

ավելի ու ավելի թվում եր ծաղրալից ու խա-բուսիկ, մինչև վոր բոլորովին չքացավ աչքիցս ու գլորվեց դեպի հավիտենակության անգունգը, ուր պատմութիւնն ավլում ու նետում է ամեն բան, ինչ վոր հնացել է ու անպետքացել:

Ես ամբողջապես նետվեցի ինձ համար այդ նոր աշխարհը:

Աստղագիտութիւնը, երկրագիտութիւնը, ռուս մեծ գրողները, յերեկոյան դասընթացները — ահա այն բոլորը, վորով ասրում էյի ես: Բայց միևնույն ժամանակ ես դեռ այնքան ույժ չու-նեյի, վոր կարողանայի հնի հետ խզել բոլոր կապերս: Հին աստվածը, իր սրբերով ու սատա-կապներով, դեռ շրջապատում էյին ինձ և նաների խմբով, դեռ շրջապատում էյին ինձ և սպանում դժոխքով: Ես կովի դարապուխն էյի վերապրում: Այն բանվորները, վորոնց ես քաշե-ցի դեպի ժուժկալներ ընկերութիւնը, դեպի հոգևոր բարկութիւնը, մանավանդ Կոստրոմի-ու Կուպցովը, դժգոհ էյին անաստված Ֆյոդո-րովի հետ ունեցած իմ բարեկամության համար: Բայց ուղղափառության մեռած ծիսակատարու-թիւնն ավելի ու ավելի զգվեցնում եր ինձ: Հրաշագործ սուրբ պատկերները և մասունքները գիտության լույսի հանդեպ, — վորի հետ ես ծանո-թանում էյի — թվում էյին արդեն հնացած, ու անմիտ անհավատութիւն, վորոնց հավատալ

կարող էյին տերտերներէց խաբվածները ու հիմար, խելքը կորցրած պառաւմները:

Առանձնակի ծանր տպավորութիւն թողեց իմ վրա գեպի Սերգեակի վանքը գնացած վերջին ուխտագնացութիւնը, վորին մասնակցում էյի և ես: Գարնան տաք գիշերը, իր ասաղերով ու սավերներով տեղի եր տվել ազոտ լուսաբացին: Ամբողջ գիշերը, յերբ ես գնում էյի այդ ամբոխի հետ, վոր փոշու, և քրտինքի մեջ կորած, աններդաշնակ աղոթքներ եր յերգում, իմ աչքին եր ընկնում այն, ինչ առաջ ես չէյի նկատում: Ժուժկալ ընկերութեան քարտուղար, երխտասարգ հրեան, վորին Սլեպյանինն ուղափառ եր դարձրել, բոլորովին հարբած եր: Այդ ընկերութեան երգեցիկ խմբի ընդհանր, հոգևոր ձեմարանի ուսանողը, ամբողջ ժամանակ «շոշափում եր» երխտասարգ ջուլհակուհներին, գալթակղեցնելով նրանց քաշում եր գեպի թփուտները:

Երբ լուսացավ, այդ խղճալի ու հոգնած, եկեղեցական եղանակներ մրմնջող ամբողջ բազմութիւնը թողեց ինձ վրա ծանր, խղճալի տպավորութիւն: Այդ միջոցին քաղաքից գուրս գրտնվող բեստորաններից քաղաք էյին վերադառնում «պարոնների» մի խումբ — երխտասարգ կանայք ու տղամարդիկ: Յեւ ես չէյի կարող չը

նկատել, թե ինչ հետաքրքրութեամբ ու տարակուսանքով, ուր խառնված էյին գութն ու արհամարհանքը, այդ «պարոնները» նայում էյին մեզ: «Ճորտերի խղճալի բազմութիւն, թշվառ, խորված մարդիկ. — մտածում էյի ես. — ինչու համար են այդ ստրկութեան նշանաբանը, այդ խաչ ու խաչվածները, այդ սուրբ պատկերները, երբ «նա» չկա, երբ մենք խաբված ենք»:

— Ի՞նչ ե պատահել ձեզ, գութ չեք պատասխանում իմ հարցերին, չեք լսում. — ասում եր ինձ մի ճախարագործի քույրը, մի պճնված, գեղեցիկ դերձակուհի, վոր հետաքրքրվելով բանավորների իմ մասին պատմածներով, ծանոթացավ ինձ հետ, նա Պուտիլովի գործարանից սկսած գալիս եր մեզ հետ:

Բայց ես մտածում էյի, արդոք, աստված կա՞, թե՛ վոչ, և բոլորովին մոռացել էյի դերձակուհու գոյութեան մասին: Երբ մենք վանք գալով տեսանք գատկա առիթով հարբած «կարմիր երեսներին», հաստափոր վանականներին և Սլեպյան տերտերին (վոր երկաթուղով եր վանք եկել), ես հիասթափութեան խոր զգացմունքով հեռացա միայնակ բոլորից, անցա կայարան ու յերկաթուղով վերադարձա տուն: Այդ ժամանակ տեղացի բանավորներից մեկը հեզնորեն ցույց տալով հարբածներին, և չազ վանականներին, ասաց. —

— «վարդապետը ինքն այստեղ իր սիրունու հետ եր ապրում»:

Եվ այդ վերջին կաթիլն էր, վոր թունավորում էր մինչ վերջ իմ դառնալից տրամադրությունը:

Երբ ես մտահույզ, դուրս եյի գալիս Բալտայան կայարանից, մեկը ձեռքն ուսիս դնելով ասաց. — Մաշկա, այդ դձև ես, դու ինձ ճանաչեցիր: Ես զարմացած բարձրացրեցի աչքերս ու տեսա իմ առաջ լավ հագնված, պարարտ մարմնով մի երիտասարդի: Միայն լավ դիտելով ես ճանաչեցի վաղեմի «Փրիդկային», վորի հետ սովորում էյի Միտրոֆոնյան դպրոցում:

— Փրիդկա բառը մարեց իմ շրթունքին, ես չը համարձակվեցի կոչել այդ անունով, ինչպես ինձ թվում էր, այդ նշանավոր պարոնին:

— Ի՞նչպես ես, — շարունակեց նա, — դու այնպես վատ ես հագնված, ամբողջապես փոշու մեջ կորած, այնպես նիհար ես, հիվանդի տեսք ունես: Վճրքան ես վառտակում:

— Քսան ու հինգ ըուբլի ամսական, — պատասխանեցի ես. — իսկ ունեմ մայր, երկու եղբայր և քույր:

— Քսան և հինգ ըուբլի ամսական հինգ հոգու համար — բացականչեց նա զարմացած:

Իսկ ես միայնակ ծախսում եմ որական ավելի, քան դուք հինգդ միասին ամսական:

Բայց ի՞նչպես եք գուք ապրում: Ես մի որ ել չեյի տանի այդ կյանքը և անպայման ինքնասպանություն կը գործեյի:

— Բայց վճրոտեղից ձեզ այդքան մեծ գումարներ, — հետաքրքրվեցի ես:

— Ես ամուսնացել եմ մի վաճառականի աղջկա հետ, — պատասխանեց նա ինձ, հրաժեշտ տալով:

Այդ Փրիդկան, վորը բոլորովին ինձանից ընդունակ չեր, մանկության ժամանակ ուտում էր սպիտակ բուլկի, հացը կարագով, զանազան քաղցրեղեն, մինչդեռ ես ուտում էյի սիայն սև, չոր և ավազոտ հաց ու զետնալինձոր: Այնուհետև շնորհիվ այն բանին, վոր նրա հայրը փող ուներ, նա ավարտեց դիմնազիան, հետո մտավ համալսարան: Այժմ նա պարոն Վեոցել է, և ծախսում է որական ավելի, քան ես վառտակում եմ մի ամսվա ընթացքում:

Մեր ուսումնարանում սկսվեցին քննություններ, և ի միջի այլոց «կրոնի դասերինը» Այդ առարկան համարվում էր նշանավոր: Բյազինի ահազին գործարանի դիրեկտորը, այդ հասակն առած զերմանացին եկավ մեր քննությանը: Տերտերը, երբ ես պատասխանեցի բոլոր հարցերին, ցանկանալով, անկասկած, ինձանով, վորպես լավ աշակերտով, գովեստ վաս-

տակել և ընդգծել աշակերտութեան վատահելից մտածելակերպը, հարցրեց հանակարծ. — Ապա, Շապովալ, ասա, ո՞ւմ պետք է աշխարհում աստծու փոխանորդ ճանաչել: Թեև ես անհասարակ աչքաբաց տղա եյի, բայց այդ հարցն ինձ նեղ գրութեան մեջ եր գրել: Անկեղծորեն ուզում եյի պատասխանել, բայց պատասխան չեյի գտնում: Տիրեց տանջալից լուռութիւն: Յետ կարմրում եյի, հառաչում, շղայնալից թափահարում եյի զըլխարկս, բայց պատասխան չեյի գտնում:

Քննող կոմիսիայի անդամները, ուսումնաբանների դիրեկտորները, սկսել եյին արդեն խորհրդալից իրար նայել: Դիրեկտորը վեր կացալ աթոռից և սկսեց քայլել սենյակում. տերտերն ուշադիր նայում եր վրաս, պատասխան սպասելով, իսկ ես ցավալից շարունակում եյի մտածել, պատրաստ լինելով գետինն անցնելու... բայց ո՞ւմ, վերջապես, աշխարհում մենք պետք է աստծու անդ ընդունենք: Այդ ծանր լուռութեանը վերջ տալու համար, տերտերն ասաց հանկարծակի, դառնալով կոմիսիային: Նա մեր լավիկն է, դառնալով ինձ, բարձր ձայնով ասաց, — Թանգալորին աշխարհում պետք է աստծու փոխանորդ համարել...

Վորովհետև ես չը կարողացա պատասխանել այդ հարցին, ուստի և զրկվեցի այն արծաթե

ժամացույցից, վոր դիրեկտորը բաժանում եր «կրօնը» լավ իմացող աշակերտներին:

Կ Ր Ո Ն Ի Յ Ե Տ Խ Ջ Ո Ւ Մ Ը

Ամառվա արձակուրդներն ինձ բավականաչափ ժամանակ եյին տալիս աստղագիտութեան, երկրագիտութեան ու Գարվինի վարդապետութեան հետ ծանոթանալու: Համեմատելով դիտութեան եզրակացութիւններն աստվածաշնչի պատմվածքների հետ, ես վորոշակի յեկա այն եզրակացութեան, վոր աստված գոյութիւն չունի, վոր վո՛չ թե աստված է ստեղծել մարդուն, այլ տերտերները ժողովրդին խաբելու համար, հորինել են աստծու մասին այդ հասկացողութիւնը:

Գալով ավետարանի և Տոլստոյի վարդապետութեանը — չարիքին չզիմադրելու խնդիրներում ես այն եզրակացութեան եկա, վոր այդ վարդապետութիւնը մեզ համար վո՛չ միայն անգուշ է, այլ՝ նույնիսկ վնասակար:

Դեպի հարուստները, տերերը, և բանավորների թշնամիները վո՛չ թե պետք է սեր քարոզել, այլ՝ ատելութիւն ու կոխով այդ մեծ չարիքի դեմ — վորովհետև դա յե միակ բարիքը: Պետք է ատել նրանց, վորոնք ճնշում են

մեզ, պետք է կռվել նրանց դեմ: Յեվ ես սկսեցի հողուս ամբողջ կրքով ատել թագավորին, վորին տերտերն առաջարկում էր պաշտել աստծու փոխարեն, սկսեցի ասել տերտերներին, վարդապետներին ու եպիսկոպոսներին, վորոնք բանվորներին ստրկութեան մեջ էյին պահում, ատում էյի և բոլոր հարուստներին, վորոնք բանվորներին հաշվին էյին ապրում: Այդ մտքերի մեջ խորասուզված, ես տուն էյի վերադառնում:

— Ի՞նչ է պատահել քեզ, ասաց Կոստյորովը, վոր հասավ ինձ.— դու վոչ մի տեղ չես երևում, դադարել ես և զրույցներին գալը, Հայր Գրիգորին (Պետրովը) քո մասին հարցնում եր... հիվանդ հո չես:

— Գիտես, Սաշա, — ասացի Կոստյորովին, — ես այլ ես յեկեղեցի չեմ գալու: Ձե՛ վոր աստված գոյութուն չունի, ինչպես վոր գոյութուն չունի սատանան: Ո՞ւր է նա, ասա: Այդ բոլորը տերտերների հորինածն է: Ձե՛ վոր գիտութունը բացասում է տերտերների բոլոր խորամանկ հյուսվածքները:

Յեթե յես ասելու լինեյի, վոր բորոտ եմ, ժանդախտոտ, կամ վարակված եմ մի այլ վարակիչ հիվանդութեամբ, Կոստյորովն այնպես չէր ցատկի, ինչպես վեր թռավ, յերբ լսեց, վոր աստված գոյութուն չունի:

Յերբ նա հեռացավ, գժվել ես ասելով, ես գգացի, վոր կորցրի նրան, իմ ամենալավ ընկերոջը, և վոր միայնակ էյի: Բայց ես արդեն ընտելացել էյի մենակութեան մտքին: Յերբ «ժուժկալ ընկերութեան» դեմ ազիտացիա սկսեցի, յես ընդհարվեցի ազիտութեան հետ: «Միայն թե իրավացի լինել, միայն ձեռք բերել ճշմարտութունը.— մտածեցի յես, իսկ մնացածը սպառնալից չէ»: Յեվ ես պատրաստվեցի, գիտենալով, վոր բոլորն ինձանից երես են դարձնելու:

Յերբ մյուս որը յես գնում էյի գործի, Կոստյորովը մոտեցավ ինձ և մեծ դարմանք պատճառելով ասաց.

— Գիտես, Ալեքսանդր, ես ամբողջ գիշեր մտածում էյի այն մասին, ինչ վոր դու երեկ ասացիր՝ աստված չկա: Դու իրավացի ես: Մեր կարդացած աստղագիտութունից ու յերկրագիտութունից հետո, աստվածաշնչի պատմութունները զառամյների հեքիաթներ են թվում... Դու իրավացի յես, աստված չկա»: Կոստյորովի խոսքերից հետո իմ մուսկ տրամադրութունս փոխվեց: Այդպես, ուրեմն, ես արդեն միայնակ չեմ, մտածեցի յես: Եթե աստված չկա, պետք է վորոնեւ սոցիալիստներին կամ նիգիլիստներին: Պետք է ուումբ նետել թա-

դավորների տերտերների վրա, պայթեցնել եկեղեցիները: Բայց ի՞նչպես գտնել սոցիալիստներին: Ֆյոդորովն ոգնել չի կարող: Նա շատ բան գիտե, շատ լավ հասկանում է իրերը, բայց սուս վերցնելուց կը հրաժարվի, կախաղան բարձրանալու քաջություն չի ունենա: Յես զգալի կերպով ձևախոխեցի իմ կյանքը, գաղափարեցի յեկեղեցի հաճախելուց, բոլորովին ձեռք քաշեցի աղոթելուց, գլխարկ վերցնելուց ու սուրբ պատկերների առաջ խաչակնքելուց:

Յեկեղեցիների, մատուռների, տերտերների ու կրոնավորների տեսքը զզվանք եր պատճառում:

Ժուժկալ ընկերության անդամները, վորոնց ես ինքս եյի անդամագրել, նկատելով, վոր ես վոչ մի տեղ եկեղեցիներում չեմ երևում, խորշում եմ նրանցից, սկսեցին գալ ինձ մոտ ե հարցնել.

— Ի՞նչ ե պատահել քեզ, «Բորովոյ», ինչո՞ւ յեկեղեցի չես հաճախում:

— Սյն պատճառով, վոր աստված չկա. — ասացի յես. — նա գոյություն չունի, այդ բոլորը տերտերների հորինածն է: Տերտերները մեզ խաբում են:

— Ի՞նչպես թե աստված չկա. — ասաց ինձ Պավել Մնդրեյեվը, դու գժվե՞լ ես:

— Վոչ, ավանդ, ես կարգացի հին և նոր կտակարաններ ու այնուհետև աստղադիտություն ու երկրադիտություն ու համոզվեցի, վոր աստծու մասին բոլոր պատմությունները տերտերների հորինած հեքիաթներն են: Ժուժկալ ընկերության այդ փոքրիկ խմբակը, Մնդրեյեվի գլխավորությամբ, դարձավ ինձանից, վորպես ժանդարտավորից, իսկ յես, լի խուլ ատելությամբ դեսպի տերտերները, աղաղակում եյի նրանց հետևից «չըկա աստված, նա չկա, տերտերները մեզ խաբում»:

Սյն լուրը, վոր Մաշկա «Բորովոյը», ժուժկալ ընկերության հիմնադիրը, աստրժուն աղոթողը, և յեկեղեցիներ հաճախողը, անաստված ե դարձել, ուրեմն և սոցիալիստ, կայծակի արագությամբ տարածվեց գործարանում: Բանվորների խմբեր սկսեցին պաշարել ինձ: Հները յենթադրում եյին, վոր ես դժվել եմ, երիտասարդները հարց եյին տալիս, թե ի՞նչու եմ ես կարծում, վոր աստված չը կա: Ոգտվելով սուրբ գրքի, այսպես ասված, դիտությունով և այլ գրքերից ստացված տեղեկություններով, ես ասացուցում եյի բոլորին, վոր տերտերները հանդուգն խաբեբաներ են, վոր չկա աստված ու չկա և սատանա: Ես զգում եյի, վոր կարծես թե թեալորովի եմ, վոր ես ամբողջ գլխով

նրանցից բարձրացել էյի: Ես տեսնում էյի լույսը վոր, գիտական տվյալներով, կարծես թե ցրում եր տերաերական խաբեբայության խավար ամպը: Նույն խանդավառությամբ, ինչպես ես առաջ հենվում էյի սուրբ գրքի վրա, այժմ ես սկսեցի խոսել, այդ սեժ, սարսափելի, դարավոր խաբեբայության դեմ:

Բոլոր բանվորները սաստիկ դարմացած էյին իմ մեջ կատարված փոփոխության համար: Յեթե յերկնքից վայր ընկած լինեք մի մեայոր, նա գուցե այդ չափ չը դարմացներ նրանց, վորքան ապշացրել էյին իմ խոսքերը: Մի ծերուկ, վոր սիրում եր ինձ, վորի հետ միասին շրջում էյինք եկեղեցիները, մի որ մոսեցավ ինձ և բոլորի ներկայությամբ բարձր ասաց. «Սաշկա, առաջ, երբ դու հավատում էյիր աստծուն, հրեշտակի էյիր նման, երեսդ պայծառ եր, աչքերդ բարի: Իսկ հիմա, այն ժամանակից ի վեր, երբ դու դադարեցիր հավատալ աստծուն, երեսդդ խավարել ե, հայացքդ մռայլվել և դու այժմ սատանի ես նման: Անիծվես դու, Սաշկա»:

Հին բանվորներից շատերն առհասարակ զրտնում էյին, վոր ավելի լավ կըլինեք, եթե ինձ, ոռւս հին սովորությամբ մի հիսուն ճիպոտ խփեյին—խեղճի բերելու համար: Բոլորը միաձայն խորհուրդ էյին տալիս.—«Յեթե միանգամ դու

արգեն չես հավատում, մի հավատալ բայց քահանաներին մի հայնոյի, վորովհե՛վ կարող են քեզ կախել... Սաշկա, անխ դու հիմար, հավատա վոր կը կախեն»:

Գալիս եր և մեքենադորժը Նիկոլայեր.—«Ասում էյի ես քեզ «Բորովոյ», հիմարություն մի անի, մի քարոզի, գիրք մի կարգա, անա և եղավ այն, վոր դու անաստված, նիզիլիստ դարձար: Իսկ հիմա դու մի ճանապարհ ունես—կը կախեն քեզ, լիրբ, Սաշկա»:

Տեսնելով, վոր երիտասարդության միակ և աննշան մասը համակրում ե մեզ, Կոստլորովի ու Կուպցովի հետ միասին, վորոշեցինք, վոր պետք ե խուսափել բանրօրների յետամնաց մասսաների առաջ եկեղեցու դեմ հարձակումներից, և վոր ագիտացիան պետք ե մղել երիտասարդ բանվորության շրջանում, առանձին անհատներ շահելու համար: Բայց զլիսավոր կետը ուր մենք համաձայնության եկանք, դա այն եր, վոր մեզ պետք էյին սոցիալիստներ: Սյդ ուղին հավանեց և Ֆյոդորովը, բայց նա անկեղծորեն հայանեց, վոր հեղափոխական կազմակերպությունների հետ ինքը կապ չունի:

ՍՈՅԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՎՈՐՈՆՈՒՄԸ

1892 թվի ամառվանից սկսած, մենք Կոստուրբի հետ սկսեցինք սոցիալիստներ ու նիգիլիստներ վորոնել:

Կոստուրբովը շատ ընդունակ երիտասարդ բանվոր էր: Սկզբում նա աշակերտ էր շապուկների արհեստանոցում, բայց հաջողությամբ նա անցավ իրերի զանազան մասերը միացնող, հարմարեցնող բաժանմունքները, և շատ շուտ ծանոթացավ սրեսարության արհեստին: Նա ընդունակ էր և մատեմատիկայից, դպրոցում համարվում էր ամենալավ աշակերտներից մեկը: Նրա հայրը վաղուց վախճանվել էր, և նա ապրում էր պառավ մոր հետ միասին: Երբ մենք ազոթքների փոխարեն սկսեցինք երգել Նովրոցկու «Մյազինի ժայռը», «Դուբինուշկա» և Նեկրասովի „У парадного подъезда“-ն, Կոստուրբովի մայրը, լսելով մեր երգերը, ասաց վոր այդ եղանակները, վորոնք այնչափ թախանձալից էյին, նա լսել էր վաղուց երբ ուսանողների մոտ աղախին էր:

— Բայց զգուշացեք, տղերք. — ավելացրեց նա, այդ երգերը արգելված են, այն ուսանողները, վորոնք երգում էյին այդ երգերը, կալանավորվեցին ու անհետ կորան: Այն որվանից այդ երգերը յես այլ ևս չեմ լսել: Ո՛հ, բարիք

չեն գուշակում ձեր այդ յերգերը, ձեզ ել չձերբակալեն...

— Վոչինչ, մայրիկ, պատասխանում եր նրան Կոստուրբովը, կարող են և չը ձերբակալել:

Փողոցներն ու դրոսարանները շրջելով, մենք դիտում էյինք ուսանողներին և սպասում էյինք գտնել նրանց մեջ այն մարդկանց, վորոնց մենք վորոնում էյինք: Բայց մեր վորոնումները մնում էյին անհետևանք: Յեվ այն ժամանակ, երբ ինտելիգենտ-հեղափոխականները վորոնում էյին բանվորներին, նրանց շրջանում կապեր ստեղծելու համար, բանվորներն էլ իրենց հերթին, շատալից վորոնում էյին ինտելիգենտներին:

Ալեքսանդր III թագավորի որով, վոր չէր քաշվում վիթխարի մորակոյ իր վորդիներին ձեծելու. իշխանությունը գյուղացիների վերաբերմամբ, չէր քաշվում «ազդիչ միջոցներից» և հարկը ուշացնելու դեպքում անխնա ձեծում էր նրանց: Գյուղացիների ու բանվորների հին սերունդը շատ չէր վրդովվում այդ բանից և հաճախ ասում էր երիտասարդությանը. «Մի հիսուն լավ ճիպոտ պետք է տալ ձեզ»: Յերի-տասարդ գյուղացիներն ու բանվորներն արդեն գգում էյին ձեծով պատժելու ամթալից սարսափը: 80-ական և 90-ական թվականներին

պատժված գյուղացիները շրջանում ինքնասպանութեան դեպքեր կային արդեն:

Փականագործ Իվան Յամբիրսկու պատմածից երևում էր, թե ինչպես էին ճնշվում ծնողների և ծերերի կամայականություններով: Ինձ մոտ գալով, նա դառնալից գանգատվում էր, վոր իր ծեր մանույրը հայրը, ստիպմամբ ամուսնացրեց իրեն մի գյուղացու աղջկա հետ: Յեվ ապա իր վորդու կնոջը սպանալիքներով իր սիրուհին դարձնելով, նա վորդու բացակայութեան ժամանակ նրա մոտ էր գալիս: Ամեն անգամ, երբ վորդին փորձում էր իր կնոջն ազատել հարսի հետ կենակցող այդ հորից, պառավը գնում էր գյուղը և այնտեղ գանգատվում ծերերին. «Վորդիս ինձ չի լսում, Վանկան փչացել է քաղաքում... Ես ձեզ, ծերերիդ մի վեղբորո ողի եմ գնում, սաստեցեք»... Գյուղի հասարակական ժողովը, որենքի հիման վրա, պահանջում էր Վանկային, և նրան 25—50 մտրակ խփելով, դրանով կողմնակի հաստատում հոր իրավունքը վորդու կնոջ վրա:

Սկզբում Վանկան փորձում էր ձեռնել հորը, բայց դրանից հետո ամեն անգամ նրան գյուղ էին կանչում և «փչացած» Վանկային, վոր արդեն 25 տարեկան էր, նորից շարդ էին տալիս: Չեմսկի նաչալնիկը, վոչ միայն հաստատում էր

գյուղական հասարակութեան վորոշումները, այլ և սպառնում էր Վանկային, ծնողական իշխանութեանը հնազանդ չը լինելու համար, ավելի խիստ ձեռնել: Խայտառակությունից ու ծաղրից սարսափահար եղած Վանկան, փորձում էր գանգատվել հորից: Բայց բոլոր ատյաններում նա մի պատասխան էր ստանում, այն է՝ հայրը իրավունք ունի վորդուց գանգատվելու թե գյուղական հասարակութեանը և թե զեմսկի նաչալնիկին, և վոր համայանքն իրավունք ունի Վանկային ձեռնել տալու: Մի փաստաբան, անտարակույս, գաղտնի խորհուրդ տվեց. — «Եթե դուք սպանեք ձեր հորը, և դատարանում ամեն բան պատմեք, ձեզ կարող են արդարացնել»:

— Ինչ անել. հարցնում էր ինձ Վանկան:

— Սպանիր պառավին, եթե նա այդչափ քեզ խայտառակում է. — խորհուրդ տվի յես:

Բայց Վանկան քաջություն չունեցավ այդպիսի վճռական միջոցի դիմելու: Նա շատ ընկճված էր և նրա մտքերը դեռ նիհրում էին:

Կոստլոբովի հետ մենք շարունակում էինք սոցիալիստներ վորոնել: Մի որ, կայարանում, երբ մենք, զրույցով բռնված, ճանապարհորդների հետ ուզում էինք անցնել առաջի կարգի սրահը, սպանապանը կանգնեցրեց մեզ կողմ գոռոցով:

—Սպասիր, ետ դարձիր, սուր եք դուք, կեղտոտ ու քոսոզներդ, ներս խուժում, մուժիկներին տեղը չես այստեղ, սա աղաների համար ե:

Մեզ շրջապատող հասարակութեան շարքերում և վոչ վոքի մեջ համակրութիւնն չը տեսնելով, մենք, արհամարված, ավելի զգալով մեր վրա անշատվածների դրոշմը, յետ դարձանք: Դոնապահները, սահապաններն ու սպասավորները մի առանձին հաճույք են ստանում նման ճիչերով վիրավորել իրենց նման մարդկանց:

Կուսցցովը շատ քիչ էր մեզ հետ զբոսնում: Թերթելով հետադիմական «Гражданин» լրագիրը, վոքը մենք սկսեցինք կարգալ Ֆյոդորովի խորհրդով, նա ուշադրութիւնն դարձրեց վոք լրագիրը առանձնապես հայհոյում է «Русское Богатство» ամսագրին: Նրան հետաքրքրեցին քննադատութեան ու գեղարվեստական գրականութեան բաժինները: Գրքերի ընտրութեան խնդիրը, լավ գիրքը վասից զանազանել զիտենալը, շատ մեծ նշանակութիւնն ունի բանվորների համար: Եթե վատ գրքեր կարգալ, այն ժամանակ կարելի չէ ընտելանալ, և Գոգոլի հերոս Պետրուշկայի նման կարգացող լինել: Ինքնագլուխ, պոռնոգրաֆիկական վեպերի հանդիպելով, բանվորն այնպես է փշացնում իր ճաշակը, վոք երբ վերջապես նրա ձեռքն ընկնում է պատահամբ գեղարվեստա-

կան մի մեծ գրողի վորևե դրվածք, գիրքը կարող է դուր չը գալ նրան, և բանվորն ընդմիշտ մնում է վատ գրքերի ազդեցութեան տակ: Մեր բարձրատաղանդ գրական քննադատները, վոք պետք են Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով և Պիսարև, անմատչելի էյին 90 թվականներում, վոքովհետև արգելված էյին ու շրջանառութիւնից վերացված: Բանասեր ընկեր Ֆյոդորովը, պատահամբ հետաքրքրվելով չարալից հայհոյանքով, վոք աջակողմյան «Гражданин» և «Луч» լրագիրները թափում էյին այդ գրողների գլխին, մեզ հնարավորութիւնն տվեց ծանոթանալու մեր գեղարվեստական և քննադատական գրականութեան հետ:

Վոք գրվածքն է գեղարվեստական և վոքը վոչ ու ինչ է արվեստը, այդ բոլոր խնդիրներում ամենքիցս շատ հեռու անցավ ընկեր Վասիլի Կուսցցովը, չը նայելով վոք նա ըստ երեւոյթին, «Շեպելեակիներից» էր, թեև նրան հովանավորում և ոգնում էյին այնպիսի լավ ու ազդեցիկ բանվորներ, վոքպես Սիզրոսկինը և Նիկոլայևը, բայց էլի ճախարագործական արհեստը նրան չէր հաջողվում: Իմ դիմաց աշխատելով, չը նայած Նիկոլայևի զգուշացումներին չը լսել «Բորովոյ»-ին, նա ինձ հետ վերապրեց կրոնով հափշտակվելու և հիասթափվելու բոլոր

ըրջանները: Բանվորական շրջանից վերածնված աշխարհ դուրս եկող ընթերցողին այն ժամանակներում առաջարկում էյին բարեմիտ ու ազգասեր շաբաթաթերթերը, վորպիսիք են «Родина», «Нива», «Север» և այլն: Առանձնապես «Север»-ում հոգվածներ էյին գետեղվում այն բովանդակութամբ, վոր սուրբ գեղարվեստը չը պետք է սուղ շահագրիտական նպատակների ծառայի: Գեղարվեստը-գեղարվեստի համար է, ասում էյին մեզ:

Վ. Կուպցովը, Բելինսկու և „Русское Богатство“ ամսագրի հետ ծանոթանալով, հանգավ այն եզրակացությանը, վոր գեղարվեստը ընդհակառակը, պետք է ծառայի բանվոր դասակարգի և մարդկության ազատագրության գործին: Պատմության ծաղրի առարկա, այդ թույլ ճախարագործ, բարձր ճակատով ու մոխրադուլն աչքերով, Կուպցովը ցարիզմի դեռ ամենախուլ ժամանակներում, երբեմն մինչ երեկո փլիխոփայական գրույցներով եր զբաղված: Այդ պայմաններում նրանից, գուցե, կարող եր դուրս գալ լավ գրական քննադատ, կամ գեղարվեստագետ: Բայց կյանքի ծանր պայմանները, բանտարկության չորս տարիները Յակուտսկի շրջանում, բարձրովին հաղթեցին նրան: Նա հոգեկան հիվանդություն ստացավ: Նրա շնորհիվ, Պրիյուտովի և

«Նարոդովոյցիների» հետ դեռ ծանոթությունից առաջ, մենք փոքր ինչ սովորեցինք լավ գրքերը վատերից զանազանեցնել, և արվեստի աշխարհում դեկադենտներին բացասորեն վերաբերվել: Մինչդեռ մենք Կոստյորովի հետ սոցիալիստներ էյինք վորոնում, Կուպցովն այս կամ այն գեղարվեստական զրվածքներն եր գտնում մեզ համար:

Ասենամեծ ազդեցությունը թողեց մեզ վրա Նեկրասովը: Նրա թախծալից բանաստեղծությունները, նրա վշտի ու զայրույթի մուգան, ավելի մտերիմ, ավելի հարազատ եր մեր սրտին: Նրա բանաստեղծություններից հատվածներ, վորոնք գետեղված էյին հետադիմական զրվածներում, ուղղված էյին հեղափոխության դեմ, և փորազրված նրա գերեզմանաքարի վրա, սարսափեցնում էյին մեզ և մեր սրտերում ուժգին բաբախում առաջ բերում:

Թեև Նեկրասովի բանաստեղծության մասին աննպաստ կարծիք ունեյին նույնիսկ այնպիսի խոշոր գրողներ, վորպիսին է Լ. Տոլստոյը, բայց Նեկրասովը եր, ու միշտ կֆնա ժողովրդական վշտերի յերգիչը, և բանաստեղծ ամեն մի բանվորի համար, վորին անտանելի յե կապիտալիստական լուծը: Մյուս գրողը, վոր Նեկրասովից հետո ազդեցություն ուներ ինձ վրա, այդ Գոգոլն

եր: Նրա «Տարաս Բուլբա»ն, վորպես արտահայտու-
թյուն Ուկրայինայի կազակ-պուզոցիական ու-
ժեղ ու կայուն մարտիկի, հեղափոխական շրջանում,
առաջ եր բերում բուն ցանկություն լինել նույն-
պես ուժեղ, կայուն, և նույնպես անհաշտ, ինչ-
պես և ինքը: Այլ մեծ գրողների մասին, ինչպես
ես արդեն ասել եմ, պատմության ծաղրով մենք
իմացանք ամենահետադեմ լրագրների, «Гражда-
нин»-ի և «Луг»-ի միջոցով:

Այդպիսով, այն ժամանակ, երբ ժողովրդա-
կան լուսավորության Մինիստր Գրաֆ Դելյա-
նովը, արտաքսում եր պարոցներից «խոհարարու-
հիների» գավազներին, և Պրեզիդենտը մտրիկի-
զացիայի յեր ենթարկել տերաբերների ու կրոնա-
վորների սև բանակը, յերբ բանվորի առաջ փա-
կել էին բոլոր դոները դեպի այն պրոդները, վո-
րոնք սթափեցնում էին ամբողջը, մենք, բան-
վորներս, բանվոր գասակարդի բարեկամներ զբա-
նելը սովորում էինք գերեզմանոցներում ու հե-
տադեմ մամուլում: Սթափվելով, կրոնական հա-
շիշից ազատվելով, ես սոսկացի կանգնելով կյան-
քի դաժան իրականության առաջ:

Ուղղափառությունը, ցարիզմը, «վելիկոու-
սական շովինիզմը», ուսս վերնաշապիկը և պո-
լուշուբկաները, երկար մտրուքը և հատուկ սան-
րված գլուխը, այդ բոլորն ինձ ատելի դարձան:

Բոլոր լավը և նորը,—ասում էյի յես, պետք
է արևմուտքից վերցնել, վորը մեզանից ավելի
շատ է առաջադիմել: Բայց արևոր հսությունից մի
բան միայն դեռ մտերիմ ու մտտ եր մեզ համար,
այդ մեծ Նովգորոդի վեչեվոյ զանգի ձայնն եր
(վեչե-նախկին ուսս քաղաքացիների համայնա-
կան խորհուրդը, կարևոր գործերի համար), իր
վեչեյով, մեկ էլ Զապորոժցիների ամբավայրի
(Запорожская сечь) գեմակրատիզմը: Ի՞նչպես
էյի ես ուզում, այն խավարում, վոր պա-
տում եր Ռուսաստանը, նորից հնչեք վեչեյի
զանգը, վոր նորից վորպես ծով, արեկոծվեր ու
աղմկեր ժողովրդական վեչեն:

Քանի վոր հավատում էյի աստծուն, ես
տարված էյի ապագա կյանքի հավիտենականու-
թյամբ: Իսկ երբ արդեն ազատվեցի այդ հավա-
տից, ուսս իրականությունը, նրա գորողովոյնե-
րով, ժանդարմներով, և դարևվոր հալատակությամբ
ինձ անչափ անմխիթար ու մոռյլ թվաց:
Ինձ անչափ անմխիթար ու մոռյլ թվաց:
Կյանքն այլևս չեր հրապուրում ինձ և ես ատիթ
եի վորոնում մեռնելու, բայց մեռնել անար-
գանքի: Վրեժն առնելուց հետո, ստորության,
դարավոր ճնշումների ու խաբեբայության հա-
մար:

Մոռյլ ատելությամբ էյի ես նայում հա-
րուստներին, երբ հանդիպում էյի նրանց: Ես

սոցիալիստներ էյի վորոնում, վոր ուումը նետեմ, սպանեմ թագավորին և մեռնեմ երջանիկ, զիտակեցելով, վոր լուծեցի վրեժս: Այսպես անցավ ամառը, եկավ աշունը ու նորից սկսվեցին դասերը, մենք անցանք երրորդ դասարանը:

Ամեն որ մենք զալիս էյինք երեկոյան ժամի 8-ին և ժամի 10-ին վերադառնում: Կիրակի որերը պարապում էյինք առավոտվա ժամի 10-ից մինչև կեսորվա յերեքը: Լրագիրների հոգվածները հասկանալու համար, վորոնք լի էյին ոտար բառերով, ոտարագրի բառարան գնեցի և լրագրական հոգվածները կարդում էյի բառարանի ոգնությամբ այնպես, ինչպես վոր յտար լեզուներով գրքեր են կարդում:

Ոգտվելով բանվորների անբավականությունից գնահատումների մշտական իջեցման խնդրում, ես սկսեցի բացատրել, վոր մեղավոր ե այստեղ այն հնազանդությունը, վորի պատճառով մենք, բանվորներս, տանում ենք ամեն բան:

Այնուհետև ես պարզում էյի, վոր այդ հանցանքի մեծագոյն մասը ընկնում ե տերտերների վրա, վորոնք քարոզում են մեզ չարիքին չըղիմազրելու պատգամը: Այդպիսի, մեղմացրած ձեով՝ իմ ազիտացիան հաջողություն ունեցավ:

Փականագործերից մեկը, Պավել Անդրեևիվ, վորին ես ժուժկալների ընկերության անդամ էյի

դրել և հետո տեղափոխվել եր երեկոյան դպրոցը, չը կարողացավ տանել այն փոփոխությունը, վոր կատարվել եր իմ մեջ և ամբաստանեց ինձ տերտերի առաջ: Իմ բացակայության ժամանակ, մեզ մոտ գալով, նա վախեցրել եր և մորս. «Ձեր Սաշկան ասարժուն չի հավատում, և թքում ե սուրբ պատկերների վրա: Ապա ցույց տվեցեք նրա գրքերը»: Գտնելով բազարում իմ գնած «Բոլոր գարերի ու բոլոր ժամանակների զաղանի ընկերությունները» գիրքը, նա տարավ այդ տերտերի մոտ: Գիրքն որինական, թույլատրված դուրս եկավ, բայց մայրս քիչ եր մնում խելագարվեր, երբ իմացավ, վոր ես աստծուն չեմ հավատում: Նա շարունակ արտասվում եր և նրան շարունակ թվում եր, թե վրաս ինչ վոր սև ձանձեր են հարձակվում: Նա վերցնում եր սրբիչը և այդ կարծեցյալ ձանձերին շարունակ քշում: Ստիպված էյի բժիշկ հրավիրել:

— Ի՞նչ ե պատահել Ձեզ. — հարցրեց նա մորս:

— Դե, սաշկան այլևս աստծուն չի հավատում, մայրս ել ցնդվեց:

— Ի՞նչպես թե չի հավատում, նորից հարցրեց զարմացած բժիշկը:

— Դե, հենց այնպես, ելի, ասում ե, թե աստված չկա, տերտերները սուտ են ասում,

խաբում մեզ, — շարունակեց քույրս, բայց միթե այդ հնարավոր ե, վոր նա — ամենակալը գոյությունն չունենա:

Բժիշկը դարմացած նայեց վրաս, ինչ վոր դեղ գրեց և հրաժարվելով իմ առաջարկած ուղևորաց, ասաց. — Անհանգիստ չը լինեք, Ձեր մայրը կը հանգստանա ու կառողջանա:...

Անդրեեվը նույն իսկ դպրոցում իրարանցում առաջ բերեց: Տերտերը բարձրաձայն դասերի ժամանակ երեք անգամ կրկնեց իրար հետևից, վոր հակակրոնական ազիտացիա թույլ չի տալ: Բարեբախտաբար, մի փոքր բթամիտ Պավլուշա Անդրեեվն ընդունել եր ինձ աղանդավորի տեղ:

Այդպես անցավ ձմեռն ու յեկավ ամառը: Քննություններից ու չորրորդ դասարանը փոխադրվելուց հետո, եկան և արձակուրդները: Մենք բոլորս շարունակում էյինք սոցիալիստներ փրոնել, բայց նրանց չէյինք հանդիպում: Այդ բանը մեզ շատ եր տխրեցնում:...

Մայրս հաշտվել եր այն մտքի հետ, վոր իր «ամենասիրելի վորդին» անաստված դուրս յեկավ: Նա առողջացավ, միայն ժամանակ առ ժամանակ արտասվում եր: Պավել Անդրեեվն աշխատում եր բռնել իմ տեղս նա շարունակում եր ուղղափառ եկեղեցական ազիտացիան և ժուժկալ ընկերու-

թյան անդամագրությունը, բայց այդ նրան չեր հաջողվում: Հասավ 1894 թվի աշունը: Հեղափոխական ուսանող, կամ նիգիլիստ գտնելու հույսերս դեռ չըկորցրած, մենք նորից սկսեցինք հաճախել դպրոցը: Չորրորդ դասարանի աշակերտների թիվը, վորոնք անցել էյին այդ դասարանը, տասից ավելի չեր: Դասերը խլում էյին մեր բուր ժամանակամիջոցը: Դիտելով այդ դասարանի աշակերտներին, մի որ չէյի անցնում, վորես նոր եկածներից մեկն ու մեկի հետ չը խոսեյի տերտերների ու հարուստների դեմ: Այդպիսով ես ծանոթացա Բորիսով կոչված նոր աշակերտի հետ: Մի որ, հուլիսին, յերբ դասերից հետո, յերեկոյան ժամի 11-ին եր մոտենում էյի տանը, անսպասելի հանդիպեցի մեր կրոնասուլց տերերին:

— Ա, Շապովալով, վո՞րտեղից ես գալիս, դպրոցից: Բայց դու բավական հեռու ես բնակվում: Սմբողջ օրն աշխատում ես, իսկ երեկոյանը դպրոց... և այն ել այդչափ հեռու: Գովելի ե... գովելի... Լսի՛ր, Շապովալով, վաղուց ե յես ուզում էյի խոսել քեզ հետ: Դու լավ աշակերտ ես. շուտով կը վերջացնես դպրոցը, դիպում կը ստանաս, իսկ հետո:

— Ձը գիտեմ, տեր-հայր, — պատասխանեցի ես:

— Բայց, — շարունակեց տերտերը, — Ինչու ես դու այդ հիմարություններով լցրել գլուխդ, ինչ վոր քարոզություններ ես անում, և կարծում ես, թե ես չը գիտեմ, Անդրեեֆը ինձ ամեն բան պատմել է: Այ տղա, թող այդ չար մտլությունը, վերջացրու դպրոցը, արի ինձ մոտ: Ես քեզ արքունի հաշվով կուղարկեմ սեմենարիա, իսկ այնտեղից քո ընդունակությունների պատճառով քեզ համար բաց կը լինեն և հոգեվոր ճեմարանի դռները... և դու կը լինես այն ժամանակ ուղղափառ ուսուցիչ և վոչ թե մի վոմն»...

Տերտերի այդ առաջարկությունը և՛ շիտթում, և վախեցնում էր ինձ: Ինձ շատ վախեցրեց Անդրեեֆի ամբաստանությունը: Չը վստահելով ուղղակի ասելու, վոր ես ատում եմ տերտերներին ու կրոնը, ես ձևացա, վոր լավ չեմ հասկանում տերտերի ասածն ու ավելացրի, վոր կը մտածեմ դրա մասին:

Դիմիտրի Զյոդորովը այն ժամանակ արդեն մեզ հետ չեր: Նա փոխադրվել էր այլ գործարան ու ինձ էլ գրում էր. «հեռացիր, Սաշկա, «Վարչավկայից» — աշխատել կը սովորես»...

Արևմտքում տեղի ունեցող գործադուլներին, բանվորական շարժման ու սոցիալիստական կուսակցությունների մասին ես շատ մթնալից, ա-

նորոշ հասկացողություն ունեյի: Դադարեցնել գործարաններն ու Ֆաբրիկանները նույնիսկ միայն Ուլոդինի ջրանցքի մասում, ուր ես ապրում էյի, և գրավիչ էր, և կարծես թե, անիրագործելի: Ես դեռ չեյի հավատում, վոր մեր բանվորները կարող են կազմակերպված դուրս գալ և այդպիսի համաձայնության համենի: Բորիսովը, վորին ես փորձում էյի մեր շրջանը քաշել, ասաց մի որ. — «Ես ձեզ կը ծանոթացնեմ Միշկա Տուլուպովի հետ: Նա սովորում է յերկրորդ դասարանում: Նա շատ ձեռնաու է ձեզ, նա էլ ինչպես և դուք խոսում է թագավորի, տերտերների ու հարուստների դեմ, իսկ ես, գիտե՞ք, վախենում եմ, փառավոնները կարող են ձերբակալել»...

«НАРОДНАЯ ВОЛЯ», ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Դերձակ Միխայել Տուլուպովը առաջին հայացքից վրաս աննպատ տպավորություն թողեց: Միջակ հասակի, բավական աննշմար, նա ինձ այնքան էլ խելոք չթվաց և նույնիսկ թվաց, վոր նա սահմանափակ հայացքների տեր մարդ է: Բայց երբ լավ գիտեցի նրան, ես տեսա, վոր նրա յերեսին և աչքերում կար մի ինչ վոր ազնիվ,

ուղիղ, անկեղծ ու անձնվիրություն, ցույց տվող մի բան: Ես կարծես թե արամադրված եյի նրան մոտենալու և հենց առաջին խոսքերից հասկացա, վոր նա վոչ լրտես էր, և վոչ ժանգարմ, այլ անկեղծ բանվոր: Նրա հետ ունեցած զրույցից ես իմացա, վոր նա արդեն վաղուց լսել է իմ մասին դպրոցի աշակերտներից, և առիթ էր վորոնում ինձ հետ ծանոթանալու. «Ինձ ասել են, վոր դուք սիրում եք զբքեր կարդալ: Եկեք ինձ մոտ վազը յերեկոյան: Ինձ մոտ կը տեսնեք ընկերների մի շրջան: Մենք զբաղվում ենք ինքնակիրթությամբ, կարդում ենք և այլն»: Ես, ի հարկե, պատասխանեցի, վոր համաձայն եմ, կը գամ:

Թեև Մ. Տուլուպովը դերձակ էր ու բանվոր ուսանողի կամ կարգացած մարդու տպավորություն չէր թողնում, բայց ներքին մի ինչ վոր ձայն ասում էր, վոր նա պատկանում է հեղափոխականների շրջանին: Յեվ նրա խնդիրը վոչ վոքին չասել այդ շրջանի ու մեր տեսակցության մասին, հաստատեցին իմ ենթադրություններս: Գիշերըյ յես գրեթե չը քնեցի: Մյուս որն ինձ առանձնակի յերկար էր թվում: Անհամբեր հաշվում էյի ժամերն ու րոպեները: Վերջապես, գուդոկը հնչեց: Ես առաջիններից մեկը դուրս թռա գործարանից:

— Այդ ուր ես այդպես շտապում, հարցրեց ինձ հասնող Կոստլոբովը:

— Լո՛ւր, պատասխանեցի ես, և վոչ վոքի մի առի: Կարծում եմ, վոր գտել եմ նիդիլիստներին այսօր գնում եմ ծանոթանալու:

— Հո՛, Ալեքսանդր, գուցե վազը մենք նոր կյանք սկսենք:

— Ի՛նչ այնպես ես նայում հարուստներին փողոցներում, վոր նրանք քո հայացքից խըրտնում են».— ասաց ինձ մի ուր Կոստլոբովը: Յեվ հիրավի, այն ժամանակ ես ապրում էյի, մի անհուն ատելությամբ: Ես ատում էյի տերտերներին, թաղավորներին, և բոլոր հարուստներին: Անդադար հիշում էյի ես, թե ի՛նչ սարսափելի պայմաններումն ենք ապրում մենք—բանվորներս, և թե ի՛նչպես լրբաբար խաբում են մեզ երկնքի դրախտով: Ես չէյի կարողանում թաղցնել զգացմունքներս: Հաստավոր բուրժուա տեսնելիս մտաբերում էյի հորս, վորին հարուստները ջարդել էյին, փշրել ատամները, մտաբերում եմ քրոջս, վոր թոքախտից մեռավ, և ատելության մռայլ կրակը, կամքիս հակառակ, բռնկվում էր իմ հոգում: Չը հավատարով այլևս դրախտի մասին պատմված հեքիաթներին, ես չը գիտեյի գեո, թե ի՛նչպես պետք է աշխարհում դրախտ ստեղծել, չը հավատարով այլ ևս աս-

տրծուն, ես շատ հեռու անցա բանվոր մաս-
սայից, վորը շարունակում էր խարխափել հո-
գևոր ստրկության մեջ, և այդ պատճառով ինձ
թվում էր, վոր մի բան է մնում միայն՝ մեռնել
ուումբը ձեռքիս, վրեժ առնելով թագավորներից,
տերտերներից ու հարուստներից:

Բանաստեղծ Հ. Հայնեն իր «Ջուլիակները»
բանաստեղծության մեջ տալիս էր մեզ այն
տրամադրությունը, վոր վորոշ պայմաններում
կարող է ապրել պրոլետարիատը:

Յերբ ես գնում եյի Տուլուսովի մոտ, ինձ
թվում էր, թե յես անցնում եմ այն անապա-
տով, վորի մասին Չեխովի մի պատմվածքում
ասված է, վոր այդ կողմով անցել են միայն
նրանք, վորոնք արհամարհել են կյանքը ու մահից
ել չեն վախեցել: Դուրս գալով սնից, ես հրա-
ժեշտ եյի տալիս կյանքին, վորը վոչինչ չէր
ավել ինձ: Ես համոզված եյի, վոր նիգիլիստ-
ները, նույնպեսի առելությամբ լցված, ինչպես և
ես, կառաջարկեն ինձ վրեժխնդիր լինել և զոհ-
վել այն արտասուքի ու այն անպատվության հա-
մար, վոր կրում էր բանվորը: Ես արդեն տես-
նում եյի այն սարսափը, վոր պատել էր բոլոր
հարուստներին, երբ հայտնվեց, վոր բան-
վորի ձեռքից ընկավ աշխարհի աստվածը— թագա-
վորը: Ես արդեն տեսնում եյին ինձ ամբոխի

ձեռքում, վոր ձեծում էր ինձ, դեպի բանտ ու
այնուհետև կախաղան տանում: Բայց ես բախ-
տավոր եմ մեռնում և այն պատճառով, վոր
ես լուծեցի վրեժս... «Նգովք քեզ, թագավոր, բո-
լոր դժբախտների վամպիր, դու հո չես խղձում
համբերատար աղքատներին»...

Պաշարված այդպիսի մտքերով, ես անց-
նում եյի դեպի Կրյուսկովի ջրանցքի ծովափը,
ուր նավթի լապտերի ազոտ լույսի տակ անցու-
դարձ էր անում Տուլուսով Միխայիլը, և ինձ
սպասում: Չեռք առնելով բոլոր հարկավոր նա-
խազուշ միջոցները, մենք անցանք Մ. Տուլու-
սովի բնակարանը:

Փոքրիկ, նեղ սենյակում, սեղանի մոտ, ինք-
նայեռի շուրջը նստած եյին Տուլուսովի եղբայր
փականագործ Գրիգորին, գրաշար Նիկոլա Բելո-
վականագործ Պետրովիչ Պրիյուտովը:
Տեղեկանալով, վոր ընկել եմ բանվորների շրջա-
նը, ես շատ հիասթափվեցի: Ինձ թվում
էր, վոր բոլոր նիգիլիստները ուսանողներ են:
Սյդ շրջանի բոլոր անդամների միջից առանձին
աչքի եր ընկնում ընկեր Պրիյուտովը: Նա ան-
պայման իր ժամանակի ամենայառաջադեմ բան-
վորներից մեկն էր: Բարձրահասակ, գեղատեսել,
գունատ, խելոք դեմքով, արտահայտիչ աչքերով,
նա բոլորովին բանվորի նման չէր: Շատ զար-

գացած, կարդացած, ինտիլիգենտ, նա ավելի շուտ նման էր ուսանողի, ուսուցչի կամ գեղարվեստագետի:

Ոգեսայի մոտ, հարավում ծնված, նա չէր հաշտվում գավառական կյանքի բթացուցիչ պայմանների հետ, վորի տիղմը տիրում էր մեր չորս կողմը: Յեվ նա Պետերբուրգ անցավ, ուր ձրգատում էյին շատերը, նրանք, վորոնք խզում էյին իրանց կապերը հնի հետ: Շփվելով ուսանող երիտասարդության հետ, նա շփվում էր նարոգովուցիներին և մարքսիստներին հետ, վորոնք այն ժամանակ նոր էյին հանդես եկել: Նա անցավ „Народная Воля“ կուսակցություն մի խմբակը վորը 1893 թ.վին կազմակերպեց Վասիլևսկի կրդգում իր ապարանը և իր գոյության մասին հայտարարեց մի քանի թուուցիկներով: Համոզված նարոգովուցե-տերրորիստ գառնալով, Պրիյուտովը գրավեց իր շրջանը բանվորներ հրավերելով և մտադիր էր այդ շրջանը առաջարկել „Народная Воля“ կուսակցությանը, վորպես մի մարտիկ խմբակցություն:

Նրան շատ էր զբաղեցնում այն միտքը, վոր ցարի վրա բանվորի ձեռքով նետված ուռմբի պայթյունի վորոտը, այսքան տարվա դադարից հետո, կը սթափեցնե երկիրը, կը ցնցի հասարակությունը, կը ստիպե կառավարությանը

երերվել, և առաջ կը բերի հեղափոխության նոր ալիք: Նա կողմնակից էր Միխայլովսկու հերոսների ու ամբոխի մասին գրված թեորիային: Նա չէր հավատում, վոր մասսաները կարող են ընդունակ լինել վորքի կանգնելու, ապստամբելու: Ծանոթանալով ինձ հետ, նա առաջարկեց ինձ պատմել իմ վերապրումների մասին: Ես պատմեցի, վոր մարդկանց մեջ ինձ միայնակ գզալով և տեսնելով, վոր նրանցից ոգնություն սպասել չի կարելի, ես կրոնի ու քրիստոնեության կողմնակիցը դարձա: Ես հմայվեցի քրիստոնեական եղբայրության, և նրա քարոզած չարիքին չը դիմադրելու գաղափարով, փայփայում էյի թշնամուն սիրելու միտքը, և ժուժկալների ընկերության ակտիվ անդամը դարձա: Բայց համոզվելով, վոր ստոված չը կա, վոր դա տերտերների հնարած ստերից ամենամեծն է, ես հասկացա, վոր մենք մոլորվում էյինք: Ես տեսնում էյի, վոր չարիքին չը դիմադրելու գաղափարը գործարանում միանգամայն խաբուսիկ հասկացողություն էր, վոր Քրիստոսի ակտիվ կողմնակիցը, վորը չէր բողոքում դնահատումների իջեցման դեմ ու չէր պայքարում հարուստների դեմ, այն հանցավորն էր, վորի շնորհիվ հազարավոր երեխաներ բերանից խլվում էր կաթի վերջին կաթիլը ու հացի վերջին պատառը:

Յեվ ես հանգեցի այն եզրակացության, վոր այդ բոլոր չարիքների դեմ պետք է կռվել ամեն միջոցներով:

— Բայց քանի տարի անցավ, մինչև վոր Գուք ազատվեցիք տերտերների ազդեցությունից, և եկաք այն եզրակացությանը, վոր աստված չը կա ու պետք է կռվել կապիտալի դեմ. — հարցրեց ինձ Պրիյուտովը:

— Շատ տարիներ, — պատասխանեցի ես:

— Հիմա տեսնում եք, — շարունակեց նա, եթե մենք ամեն մի բանվորի առանձին-առանձին կըթելու լինենք, կանցնեն տասնյակ տարիներ ու այդ բանից վոչինչ դուրս չի գալ: Բանվորներին միայն առանձին անհատներ, ինչպես վոր դուք այդքան տարի անցնելուց հետո, կարող են գիտակցել կռվի ու վրեժի անհրաժեշտությունը: Առանձին անհատներին ավելի հեշտ է մարտիկ խմբեր կազմելը: Նրանք ուժերեր կը նետեն և թագավորներին ու մինիստրներին սպանելով, կը ստիպեն կառավարությունը զիջումներ անել:

— Տվեք ինձ ուժերեր, — ասացի ես, — ես պատրաստ եմ նետելու այդ ուժերերը ու մեռնելու... Կոստորբովն ու Կուպցովը նույնպես պատրաստ են ուժեր վերցնել ու նետել թագավորների և հարուստների վրա: Կոստորբովի հետ

մենք վաղուց նիգիլիստներ ենք վորոնում, շարունակեցի ես, իսկ առաջ, տերտերներին ու հորս լսելիս, ես կարծում եյի, թե նիգիլիստները դահիճներ են: Այժմ վաղուց համոզվել եմ, վոր սխալ եմ եղել, նրանք դահիճներ չեն, կռվում են մեզ, ճնշվածներին ազատելու համար, և ընկնում անհավասար կռվում:

— Ընկերներ, առաջարկեց Բելովը, գնանք զբոսնելու: Այստեղ անհարմար է դառնում շարունակելու մեր զրույցը, մեզ կարող են լրտեսել:

Մենք դուրս եկանք Սաբովայա փողոցը, անցանք Վոզնեսենսկի պրոսպեկտը, Նիկոլայ Ի-ի արձանի մոտով, վորի մասին Յյոզորով ստում եր. — «Հիմարը խելոքին կը հասնի, եթե Իսահակը չարդելի» *):

Այնուհետև անցանք Իսահակովսկի տաճարի մոտից վորը վիթխարի հսկայի նման բարձրանում էր մթության մեջ, և դուրս եկանք դեպի Պալատյան կոչված ծովափը: Արդեն ուշ եր, ծովից փչում էր ցուրտ քամին, շուրը բարձրանում էր և Գալբոնի նավահանգստին սովորականի նման հեղեղ սպառնում: Նևան ալեկոծվում էր և խաբլիսիների վերա կանգնած նավեր ձոճոում ու հառաչում էյին: Մենք հենվեցինք ծովափի քա-

*) Իսահակի տաճարը Պետերբուրգի տաճարներից մեկն է:

րե պարխապները վրա: Մեր ձախ կողմում գրտնվում եր Չսեռային պալատը, աջից, ջրի լայն սարածութեան այն կողմում, վորպես մի մռայլ գիծ, գծագրվում եր Պետրոպոլիսկի ամրոցը:

Մի ինչ վոր վախազդեցիկ բան եր փշում այդ մռայլ գետից, վորի վրիվրագեզ ալիքները ազմկում էին ու անցնում առաջ: Այդ մռայլ ամրութեանների շրջապատը և զանգերի «Коль Сламень» մեղեդին այնքան սիրալիք տալավորութեանն եր թողնում: Պրիյուտովը բացատրում եր ինձ, վոր նիգիլիստների կուսակցութեան չկա, վոր կա սոցիալիստների «Народная Воля» կուսակցութեանը, վորը տերրորի միջոցով կռվում ե ժողովրդի ազատագրութեան համար, բայց կուսակցութեան ամեն մի անդամի, վորն ուզում ե հետեւել ժեյարովի որինակին և ձեզ, ել նրանց թվում, ժանդարմները կարող են ձերբակալել և ձգել այն քարե տուպակը, վոր գտնվում ե գետի այն կողմում, ասում եր Պրիյուտովը: Նրա ձեռքերը ցույց էին տալիս պալատը, ուր ապրում ե ժողովրդին ճնշող բռնակալ թագավորը, և բանտը, ուր տառապում են նրանք վորոնք վորձում են ազատել այդ ժողովրդին: Լապտերի յերեվող լույսը միջոց եր տալիս դիտելու Պրիյուտովի աչքերը, ուր մռայլ վառվում եր վրեժի և ատելութեան կրակը դեպի թագավորը ու հարուստները....

— Իմ ամբողջ կյանքը մի բանա ե յեղել: Կյանքն այլ ևս ինձ չի հրապուրում: Ռումբ տվեք ինձ, ասացի յես, — ես չեմ վախենա վոչ բանտից, վոչ փորձանքներից և վոչ կախադանից:

Վճռված եր, վոր ես կը մտնեմ «Народная Воля» կուսակցութեան խմբակցութեան մեջ ու Պրիյուտովին կը ծանոթացնեմ իմ բոլոր ընկերների հետ: Մենք հրաժեշտ տվեցինք իրար և ցրվեցինք մեր տները: Բախտավոր այն բանով, վոր գտա նրանց, վորոնց երկար ժամանակ վորոնում էի, ես տուն վերադարձա: Մեր տան դարբասի մոտ, ուր ապրում էի, նկատեցի մի մութ ուրվական: Դա կոստլորովն եր, վոր սպասում եր ինձ:

— Դիտես Սաշկա, — ասացի նրան — յես գտա նրանց, վորոնց մենք այնքան երկար վորոնում էինք: Բայց նրանք նիգիլիստներ չեն: Նիգիլիստներ վաղուց չըկան: Նրանք նարոզվուց սոցիալիստներ են: Նրանք ցանկանում են հենց նույնը անել, ինչ վոր մենք ենք մտածում — ումբ նետել թագավորներին:

— Յես պատրաստ եմ, — ասաց կոստլորովը: «Народная Воля» խմբակցութեան մեջ ինտելիգենտ ղեկավարների, ես շատ քիչ էի հանդիպում: Անպայման հավատալով այնպիսի աչքի ընկնող բանվորի, վորպեսին եր Վ. Պ. Պրիյու-

տովը, վորը կարող եր, ինչպես ասում էյին, տա-
սը ինտելիգենտի պատասխան տալ: Ինտելի-
գենաները բանակցում էյին մեզ հետ Պրիյուտո-
վի միջոցով: Վորովհետև ժողովրդի ազատագր-
ման կողմնակիցներն իրենց գլխավոր ուշադրու-
թյունը դարձնում էյին առանձին անհատներին,
հերոսներին վրա, վորոնց հակադրում էյին տգի-
տության մեջ խարխափող ամբոխին, այդ պատ-
ճառով մենք մեզ անհատական հերոսներին մի տե-
սակ կուլտ էյինք ներկայացնում: Ես ազահու-
թյամբ հետևում էյի այդ վոչ հասարակ մարդ-
կանց ամեն մի խոսքին: Նրանք հասկանում և
զգում էյին միլիոնավոր չքավորների տառապանք-
ները նրանք խանձվում էյին ատելությամբ դեպի
թագավորը և այլ բռնակալները: Բանվորներին,
բերում էյին Պրոմեթեոսի հուրը: Նրանք անկեղ-
ծորեն ու խորալից սիրում էյին ընկճված ոռւս
ժողովրդին, ի դեմս վորի ճանաչում էյին բան-
վորին ու գյուղացուն: Յեվ հանուն այդ ժողո-
վրդի վիճակի բարելավման, նրանք պատրաստ
էյին անել ամեն բան, ինչ վոր կարող էյին:
Ընկճված ժողովուրդը, նրանց աստվածն էր,
հանուն վորի նրանք տրեխներ հազած և ցնցո-
տիներին մեջ կորած, կախաղան էյին բարձրա-
նում: Ռուս ժողովրդասեր ինտելիգենցիան այդ
վերին աստիճանի հետաքրքիր երևույթը պատ-

մության մեջ— կազմում և նրա գեպեյիկ եջե-
րից մեկը: Խորին հարգանքով ես հիշում եմ նրանց
բոլորին և վորպես բանվոր ասում, «հարգանք
ձեզ»:

Մինչև նրանց հետ ծանոթանալը, յես գիտեյի
միայն ատել: Նրանց հանդիպելուց հետո յես
սովորեցի սիրել, բոլոր խեղճերին ու ճնշվածնե-
րին ինչպես սիրում էյին իրենք: Պետք է ճշմա-
րիպը խոստովանել, վոր ինտելիգենտ նարոդո-
վոլցիները՝ կարծես թե ավելի վոգելից էյին,
ավելի փափկալից, քան ինտելիգենտ մարքսիստ-
ները: Այս վերջինների համար բանականությունը
գերակշռում էր զգացմունքին, և այն ժամանակ
նրանք կարող էյին ավելի սահմանափակ մարդ-
կանց տպավորություն թողնել, քան նարոդովոլ-
ցիները: Բայց երբ, հետագայում, ես ծանոթա-
ցա ինտելիգենտ մարքսիստների հետ, ստիպ-
ված էյի համոզվելու, վոր նրանք ավելի լավ են
մտածում, քան նարոդովոլցիները:

Ինտելիգենտ նարոդովոլցիներից ես ամեն-
քից առաջ ծանոթացա Ալեքսանդր Ալեքսանդրո-
վիչ Յերգինի ու նրա կնոջ, Լյուբա Վլադիմիրով-
նայի հետ:

Հետո, գաղտնի տպաբանում, ես հանդիպե-
ցի ընկեր կատանակային, Ֆեդուլովին և Յեկա-
տերինա Ալեքսանդրովնա Պրեյու— Իոհանսոնին:

Պրիյուատովի և նրա խմբի հետ ծանոթանալու օրից ես վերապերում եյի նոր սպալորություններ և միանգամայն տարված եյի նրանցով, ձերբակալման վտանգի մշտական սպառնալիքը: Վոր մեզ վորսում են ու միշտ հետևում մեր հանդիպումներին ու ժողովներին, մի առանձին կենտոնակուլթյուն եր տալիս մեր այն ժամանակվա վերապերումներին:

Ես դիտակցում եյի արդեն, վոր ես վաղեմի վոչնչությունը չեմ այլ ևս, ես այն բանավորը չեմ, վորին փողոցում չի կարելի տարբերել ամբողջից: Ես գիտակցում եյի, վոր ես անդամ եմ այն կազմակերպության, վոր այնչափ վտանգավոր ու ահարկու է կառավարութեան ու հարուստների համար: Բոլոր վերապերումները և նոր եյին մեզ համար, և՛ գրավիչ...

Գործարանը իր մեքենաների դրդյունով, իր ճախարագործ մասերով, երեկոյան դասընթացները իրանց ֆիզիկայով ու քիմիայով, մորս մասին հոգսը—այդ բոլորը երկրորդական դարձան ինձ համար: Ես շատ լավ գիտեյի, թե ի՞նչ վտանգ է սպառնում ինձ «Народная Воля» տերրորիստական խմբի մեջ մտնելուց հետո:

Բանվորների մեջ խուլ ու չափազանցեցրած լուրեր եյին շրջում այն վիճակի մասին, վոր սպասում է սոցիալիստներին:

Դեռ իմ հայրս և այլ բանվորներ պատմում եյին, վոր ձերբակալված սոցիալիստին նրատեսցնում եյին Պետրոպոլիսի բանտի քարե տալրակում, վոր լցվում եր ջրով: Երբ ջրի մեջ խեղդված սոցիալիստը մեռնում եր, այդ սենյակի յատակը բացվում եր ու նրա դիակը ընկնում Նեա գետը:

Սոցիալիստ դառնալ, բանվորների կարծիքով, կը նշանակեր նախորոք սարսափելի մահվան դատապարտել: Նարոդովոլցիների թեորիան իմ շրջանի մարդկանցից բոլորից շատ Վասիլիյ Կուպցովի սրտովն եր: Նիկոլանը ու Սիգրոսկին Վասիլայի պատճառով միշտ բարկանում եյին ինձ վրա:

—Հիմար Վասիլա, ասում եյին նրանք Կուպցովին, ինչո՞ւ ես դու Բորովոյին լսում: Երկուսիդ ել կը բանտարկեն: Սա միակ ճանապարհն է ձեզ համար:

Վորչափ վոր առաջ Կուպցովը սուրբ գրքի լավ մեկնաբանն եր, այնչափ ուժգին ու կարդալով, նա մոտ ծանոթացել եր Բելինսկու, Չերնիշևսկու Դորբոյուբովի, Պիտարևի ու մեր գեղարվեստական գրականութեան հետ: Երբ մի տարուց հետո յես անցա մարքսիզմի կողմը, նա դեռ նաբորովոլցիների թեորիայի համառ կողմնակիցն եր: Այն ժամանակ ես նրա վրա ազդեցություն չու-

նեյի արդեն: Առանձնապէս միտթարական եր
գիտակցել, վոր ես միայնակ չեմ, վոր ես բա-
րեկամներ, ընկերներ ունեմ, վորոնց կարող եմ
վստահել: Ինձ շատ զարմացում եր եզրայրա-
կան այն զգացմունքը, վոր տիրում եր Պրիյու-
տովի խմբում: Այդ յուրայնի փոքրիկ կոմմունա
եր, ուր ամեն բան ընդհանուր եր: Բոլոր այն
զեղեցիկը, լավը, վորի մասին ես երազել եմ և
վորը գոյութիւն ունեք առաջին քրիստոնեական
համայնքներում այդ բոլորը կար այստեղ:

Յուրաքանչյուրը աշխատում եր հոգալ ըն-
կերոջ մասին ավելի, քան եզրոր: Կյանքը լի եր
հոգեվոր, և մտավոր շահերով: Պրիյուտովը ժո-
ղովի վոզին եր: Երբ կղզիներից մեկում, կամ
ժովի ջրերում, ուր մակույկով մենք ծփում, հե-
ռանում եյինք, ես լսում եյի նարոգովուցիների
հեղափոխական երգերը և ուկրայնական մրմունջ-
ները, ինձ տիրում եր մի խռովալից ու հմայիչ
տրամադրութիւն: Արևի հրեղեն սկավառն ար-
զեն խորասուզվում եր ծովում, մարում եյին
վերջալուսի մուգ կապույտ շողերը: Երկինքը
ժպտում նորածին լուսինի և աստղերի ժպտով,
արագ անցնում եր ամառվա կարճալից գիշերը,
շառագունվում եյին վազորդյան լույսերը, իսկ
ևս դեռ աակալին գերված եյի նոր վերապրում-

ներով և տակալին նիրհում եյի հնչյունների այլ
կախարդիչ աշխարհում:

Մի վոքք անց, Պրիյուտովը հայտնեց,
վոր մեզ, նրա խմբի անդամ-բանվորներէս վի-
ճակվում ե մահափորձ պատրաստել Ալեք-
սանդր III թագավորի համար: Այդ պատճառով
զգուշութիւնը կրկնապատկվել եր, վորոշված եր,
վոր ամեն տեսակի քիչ թե շատ ակներև ազի-
տացիան ու պրոպագանդը գործարանում ու
զպրոցում դադարի: Պրիյուտովը նույնիսկ կար-
ծում եր, վոր ինձ հարկավոր ե բոլորովին հե-
ռանալ զպրոցից, ուր ես տերտերի աչքում ա-
րատավորված եյի և վոր ինձ պետք ե անցնել
մի այլ գործարան, ուր ինձ չեն ճանաչում: Երբ
ևս ընդունվեցի, Մ. Տուլուպովն անմիջապէս թո-
ղեց զպրոցը, իր միտման վերջացած համարե-
լով: Թեև ինձ սխալն մի քանի ասիս եր մնում
զպրոցը վերջացնելու համար ու թեև ես շատ
եյի ուզում վերջացրած լինել ուսումս, այնու-
ամենայնիվ ես թողի զպրոցը:

— Ի՞նչիս ե պետք այդ դիպլոմը, մտածում
եյի ես, միենույնն ե, պետք ե կախադանի վրա
որորվեմ...

Մենք մշակեցինք Ալեքսանդր III թագավո-
րի մահափորձի ծրագիրը: Վերջինս, կատչինս
ուզկորվելով, ուր նա, Կ. Մարքսի ստեղծով,

ուսս հեղափոխութեան գերին եր, սովորաբար անցնում եր Վոզնեսենսկի համեմատ նեղ պրոսպեկտով: Պրիյուտովը, վոր վաղուց աշխատում եր այդ ուղղութեամբ, վորպես ձեի ավագ վարպետ բանում եր հագուստեղենի մի արհեստանոցում: Այդ արհեստանոցի մագազինը ուղղակի Վոզնեսենսկի պրոսպեկտումն եր: Վճոված եր, վոր թագավորի անցնելու որը մեզանից մեկը ումբով կը մտնի այդ մագազինը, վորպես հագուստի պատվեր ավող: Պրիյուտովը պետք ե զբաղեցնել նրան զբույցներով մինչև թագավորի անցնելու մոմենտը: Եթե թագավորն եր, վոր փողոցի նշանաբանով այդ ընկերը, Պրիյուտովի հետ, դուրս կը թռչեն մագազինից և պայթող ումբը կը նետեն թագավորի կողքի վրա: Մեր խմբի մյուս անդամները, անհաջողութեան դեպքում պետք ե վերջացնեն գործը: Մահափորձի իրագործումը շատ բարդանում եր վոստիկանների ու լրտեսների ահագին բազմութեամբ, վորոնք երկու շարք շղթա ելին կազմել Վոզնեսենսկու և Իզմայլովսկի պրոսպեկտների շուրջը: Բացի այդ, թագավորը, երկու հիանալի ձի լծած կառքով, անցնում եր վերին աստիճանի արագընթաց: Հաստ կառապանը մի գլուխ քշում եր, չինայելով ձիերին: Թագավորին շատ ելին պահպանում, բայց մենք այնուամենայնիվ հույս

ունեինք, վոր մեզ կը հաջողվի ումբը նետել նրան: Այդ որերում մենք փորձնական մորիլի-դացիա ելինք անում:

Թափառաշրջիկներին նման, անցուկարձ ելինք անում Վոզնեսենսկի պրոսպեկտով և շատ ցավում եինք, որ «Народная Воля»-ի խմբակցութեանը մեզ պայթեցնող ումբերը չեյր տալիս: Իսկ մենք ձեռքից թողնում ելինք շատ նպաստավոր դեպքեր, երբ հեշտ կը լինել թագավորի վրա ումբը նետել:

«Народная Воля»-ի խմբակցութեանը թույլ եր իր քանակով և չեյր գտնում ուսանողների շրջանում այն համակրութեանը, վորի վրա նա հույս ունեյր:

Այդ միջոցում նա հանդիպում եր իր գաղտնաբարական հակառակորդին ի դեմս Ռուսաստանի նորածին Մարքսիզմի, վոր անպայման հաջողութեան ունեյր: Իսկ «Народная Воля»-ն վոր տարվուրբերվում եր այդ որերում և չեյր վստահանում կազմակերպված մահափորձ սկսել, հետաձգեց տերրորի կանոնադրութեան սխառեմը մինչև մի ավելի բարենպաստ մոմենտի:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.





« Ազգային գրադարան



NL0403516

